

Ազգային, Գիտական, Գրական եւ Քաղաքական

ԻՐ. ՏԱՐԻ — ԹԻԻ 6

II

7 ՓԵՏՐՈՒԱՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ճարտարխօսութեան Պատմութիւնը
(Գրեց՝ ԼՈՐԷՆՑՕ ՍԻՐՍ)

ՅԱԿՈՐՈՍ Հ. ՃԷՃԻՉԵԱՆ

Օրէնք եւ Աւետարան Բ. — Տասնաբանեան Քրիստոնեաներուն համար պարտաւորի՞չ է

ՓԱՌՆԱԿ ԻՍԳԷՆՏԷՐԵԱՆ

Ներսէս Լամբրոնացի

ԲԱՅԳԷՆ ՎԱՐԴ

Ուսանողին Կտակը (Նորակոյ)

Ֆ. ՆՈՐԻՍ

Բժշկական էջեր. — Տարօրինակ Հիւանդութիւն մը.
— Բնախօսք

ԼԵՒՈՆ ՍԻԻՆԻ

Նօթեր. — Համազգային Օրացոյցը

ՄԻՀՐԱՆ

Օրուան հարցերէն

ՌՕՄԱՆ Խ.

Իսահակ ՆԵՆՏՈՆ

Ա. Կ. ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ


Յաջողութեան պայմաններ. — Ի՞նչ կը պահանջուի
առեւտրի մարդոցմէ

ՅՈՎՀ. Ս. ՀԷՔԻՄԵԱՆ

Հոգեբանական-Իմաստասիրական հարց մը


Ն. Յ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Քաղաքական Աւխարհին մէջ. — Ճարտն եւ Ռուսիա պատերազմի մէջ



Հատը 40 փարա

ՏՊԱԳՐ. ԿԵԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ



Ազգային, Գիտական, Գրական եւ Քաղաքական

ԻՔ. ՏԱՐԻ — ԹԻՒ 6

||

7 ՓԵՏՐՈՒԱՐ 1904

ԲԱՃԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. ԲԻՐԱԿՆ Դարաքաբերի Ցարեկան բաժնեգինն է Պոլսոյ եւ Գաւառներու համար 50 դր., Արասան մանր հասար՝ 5 բուպլի. կամ 12 ժրանց կամ 2 1/2 տոյար, բոլորսարուքեան ծախք մեր վրայ:— 2. Չեմէ կը ծախուի հասք 40 փառայի:— 3. « ԲԻՐԱԿՆ » ի վերաբերեալ բաժանորդագին, նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Կ. Պոլիս, Պոլսոյ Հասարի միջոցաւ՝ Ռոպէրդ Գօլէն, Բրոժ. Յակոբոս 2. Ճեմբղեանի.
- 4. Անվճար նամակ կամ գրութիւն չընդունուի:— 5. Տարբ օրինակի բաժանորդ զանոցին մէկ օրինակ նուէր կը տուի:

ՃԱՐՏԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԳՐԵՑ՝ ԼՈՐԷՆՑՑ ՍԵՐՍ

Ե.

ՊՕՍԻԷ, ՊՈՒՐՏԱԼՈՒ, ԶԱԹԱՄԻ, ԷՏՄԸՆՏ ՊԸՐԳ, ՄԱՍԻՅՅՈՆ,

Ասկէ վերջը, ճարտարխօսութեան ուրիշ փայլուն օրինակներ կ'երեւան Ֆրանսայի մէջ, ուր արդէն անոր նպաստաւոր եղած պայմանները հասուննալու վրայ էին. Ֆրանսական այն գրականութեան մէջ, որ հաւաքուած էր ԺԱ. դարէն մինչեւ ԺԷ. դարը, երգերով, վիպասանութեամբ, կենսագրութեամբ և պատմութեամբ, մինչեւ որ վերջապէս, յանգած էր մէկ արձակ լեզուի մը, որ շատ յարմար էր ճարտարխօսութեան.

Ճագոյն քարոզիչը հանդիսացաւ Մնած խօսելու բնական ձիրքով մը, իր պատանեկութենէն սկսեց ծափահարութիւններ ընդունիլ՝ բարձր ունկնդրութիւններէ: Ամէն միջոց գործածեց իր կարողութիւնները մշակելու, ուսումնասիրելով դասական գրութիւնները, ինչպէս նաեւ երբայական մարգարէներ և հոշակաւոր դերասանները և արտասանութեան կերպերը, նմանապէս Ոսկեբերանի, Օգոստինոսի և Ովբեգինէսի քարոզները, կորովի ճարտարխօսութիւն մը միացուցած էր ընդարձակ հմտութեան, և մինչ կարեկցութիւն կը ցուցնէր խոնարհա-

Պօսիէ այդ ճարտարխօսութեան ամէնէն առաջին օրինակը տուաւ և իր դարուն մե-

գոյն դասակարգին, ազականնայ միջավայրերու մէջ գտնուած մոլութիւնն ալ սաստկապէս կը կշտամբէր:

Պուրտալու անոր նախանձորդն էր, մասնաւորապէս ողջամիտ տրամաբանութեան մէջ: Անոր քարոզները լի են խորհուրդով և հրահանգութեամբ. ան իր ունկնդիրներուն խորհիլ կուտար և իր տրամաբանական բանախօսութիւնները, այնչափ հաճութեամբ կ'ունկնդրուէին, որչափ Պօսիւէի բանաստեղծական պատկերացումները:

Մասիյեօն ցոյց տուաւ թէ, ճարտարխօսութեան գոնէ երրորդ ոճ մըն ալ կրնայ ըլլալ միեւնոյն դարուն մէջ: Արտասանութեան մէջ վայելչագեղ, պարզութեամբ գեղեցիկ, զարդարանքի մէջ լուրջ, իր քարոզները կ'ազդէին անոնց, որոնք կը զմայլին ներդաշնակաւոր լեզուին, առանց գործածելու յուզում յառաջ բերելու մասնաւոր միջոցներ, ան կը խօսէր ուղղակի իր ունկընդրաց սրտին, մինչ իր երկու մրցակիցներէն մէկը կը խօսէր անոնց մտքին և միւսն ալ անոնց երեւակայութեանը:

Թէ ով էր ճարտարխօսութեան այս սահմաններուն մէջ ամէնէն մեծը, կրնայ որոշուիլ միայն պարագաներուն և ունկնդիրներուն տեսակին նայելով: Երեքը մէկտեղ տասնը-եօթեորդ դարու վերջին կէսը հրապարակախօսութեան պատմութեան մէջ փայլուն ժամանակամիջոց մը ըրին:

Անկէ ետքը երկու դար անցաւ մինչև որ այս ժամանակին հետ բաղդատուելու արժանի որ եւ է ատենախօսական տաղանդ մը երեւան ելաւ: Միռապօ յստակ, դրական և արպմարպնական էր երբեմն, երբեմն ալ բուռն, հրավառ, և խիզախ: Տանդոն որ հետեւեցաւ անոր, մրրիկին մէջի ձայնն էր: Եւ Ռօյան, Լանժիւիէ, Լուվէ, Պարպարու: Մառա և Ռօպէսփիէն երեւելի հանդիպացան իրենց բուռն և համոզիչ լեզուովը: Պոնարարթինքն ալ ճարտարախօս էր. երբ կը խօսէր բանակին, և գիտէր թէ ինչպէս խօսելու էր, անանկ որ անկնդիրին մէկը անգամ մը սա դիտողութիւնը ըրաւ. «ան այնպէս կը խօսի, որպէս թէ լերան մը

վրայ կայնած ըլլայ և ինքը հարիւր կաթիւն գոն բարձր»: Ֆրանսայի վերջին ժամապիտանակներու ատենաբաններուն մէջ, նշանաւորութեան մը բռնած է նաեւ Լաֆայէթ, իր լուրջ խորամաբանական և չափաւոր ոճովը: Լաուս մասթին բանաստեղծական աշխուժ կրնա քաղցրանշուն էր. Կիզօ՝ լուսափայլ, զգուհիմն շաւոր, և ճշգրիտ, Թիէռ՝ սառուն, զուարթ և փայլուն էր, Ֆրանսացիներուն Ֆրանսայուտ յին: Այսպիսի բազմազան տաղանդներու ակա արտագրութեցաւ լեզուի գանաղանութիւն և թեազոր հազիւ կարելի պիտի ըլլար արտադրութեան որ և է ուրիշ ազգի և ժամանակի մէջ: Արի տեսնուէին անոր մէջ վայրի տեսութիւններ, ընտրարձր, վսեմ սեսիլներ, բայց փորձառութեան իմաստութիւնը կը պակսէր հոն:

Միջին Բրիտանիոյ Բառլամէնդական ճարտարխօսութիւնը, շատ մը նկատումներով կ'ընթացէր հակապատկեր մը կը կազմէր Ֆրանսային հետ: Ազգային գերիշխանութեան և գաղութային ծաւալման դարու մը մէջ, ժամանակին պէտքերը ստեղծեցին մեծ պետական ձեռք, և խոնուն ատենաբաններ. անոնք առաջ ալ կը գտնուէին հաշակաւոր անախօսներ, նման Սըր Ճօն Էլիզբէ, Լորտ Կամօ, ՍդրաՊորտի և Չէսթըրֆիլտի, բայց Գեւոր Գիթի թագաւորութեան ատեն միայն կը խախտուի մը մարդիկ, որ այդ դարը նշանաւորին իր ճարտարախօսութեան համար:

Ուիլեմ Բիթլը Չաթափ առաջին Լոռինքցիինք նուիրած էր Օքսֆորտի մէջ ճարտարախօսական ուսմանց: Օքսֆորտէ կը լինէ ետքը, դարձեալ ինքզինքը նոյնօրինակ ուսմանց տուաւ Թեմոսթինէսի արժանի րատեսութեամբ մը: Այս կերպով ինք ժիրութեամբ մշակեց, իր բնական մեծ ձգտեքը: Ան ոչ թէ միայն բնական կարողութեանց վայելչութեան և բարձր դաստիարակութեան մը առաւելութիւնները ունեցաւ, այլ ասոնց հետ մէկտեղ, ունէր աննախկան բարձր նկարագիր մը, լայն հայեացքներով, աղգային պատուոյ բարձր ըմբռնումով, ոչ թէ ժամանակին ծառայութեան ստրուկ դիտումներով լեցուած: Աւելցուցած ասոնց վրայ իր համոզկերութեան կարող

ՕՐԵՆՔ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆ

2.

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱՒՈՐԻՉ Է

Ամէն մարդ կ'ընդունի թէ, Քրիստոսի քաջարար գործին շնորհիւ ծիսական օրէնքը դադարած է: Բայց տասնաբանեայ օրէնքն ալ դադարած է: Մովսիսական օրէնքներուն բարոյական, ծիսական և քաղաքային անունով մասերու աւանդական բաժանումը՝ աստուածպետական կանոններուն քնդհանուր երեւոյթը զիւրացնելու համար ծառայութիւն մը կրնայ մատուցանել, սակայն եթէ այս բաժանման նպատակը օրէնքի իսկական բնութեան մէջ խտիք մը յառաջ բերել և անոր այլ և այլ մասերուն համար ու է գերազանցութիւն մը պահանջել է՝ բոլորովին սխալ է ան: Քրիստոս եւ իր առաքեալները՝ օրէնքի հոգին շեշտեցին, սակայն ոմանք օրէնքի երկու տարրերը— գիրք եւ հոգի—իրարմէ զանազանելու անկարող ըլլալով սխալմունքի մը մէջ ենկան, եւ առ երեւոյթս տեսնուած անհամաձայնութենէն խուսափելու համար, օրէնքի իսկական բնութեան մէջ բիրտ զանազանութիւն մը դնելով՝ Տասնաբանեան ծիսական ու քաղաքային օրէնք անունով իրարմէ բոլորովին տարբեր երկու գլխաւոր մասերու բաժնեցին: Ասոնց համեմատ մովսիսական դրութեան տասը պատուիրանները բարոյական եւ մշտնջենական են, իսկ մնացեալը ոչ-բարոյական եւ ժամանակաւոր: Եւ Քրիստոսով Մովսիսական տնտեսութեան առջի մասը հաստատուած եւ յաւերժացուած է, իսկ երկրորդ մասը կատարուած եւ վախճանած է: Այս տեսութեան պաշտպանները կ'ըսեն թէ՛ Պօղոսի Հռովմայեցւոց և Գաղատացւոց թուղթերուն մէջ նկատողութեան առած օրէնքներուն խափանումը՝ ուր կը պարզուի որբեայրիին ազատումը, իր

կանթիւնները եւ ան ատենը գաղափար մը Բամալիտի կրնաք կազմել իր ճարտարխօսութեան նաւթորութեան վրայ: Մեծ նիւթերու վրայ զուրկ խօսէր պարզ և համոզիչ լեզուաւ մը, կը Լաուսարանէր զանոնք ապացոյցներով եւ օւժ ինականերով, ունէր ուժգնութիւն մը, որ զգոյնմուած էր խորունկ համոզման վրայ, որ Լաուսար բոյոր ըսածներուն մասնաւոր ուժ մը անսարկաւոր եւ միեւնոյն ատեն վարվումն երեւնորակայութիւն մը՝ իր ատենախօսուան միտան, ամենաբարձր հմայքը: Ինչ որ կը առարկայէր, ներդաշնակ էր՝ արդարութեան քննարկական սկզբունքներուն հետ: Էտ-նէն ինչ Գըրք, ուրիշ մեծ ատենաբան մը, որ ամերիկեան գործոց հետ մօտէն ծանօթ ըլլալու առաւելութիւնը ունէր, իր պատասխանութեան ատենէն, աստուածաշնչական կրթութիւն մը առած էր, որուն աւելցուց ետքէն հին բանաստեղծներու և ատենաբաններու, Պէյքընի և Միլտընի ու պատմութեան փրկիստփայլութեան ուսումը: Թէ՛ պէտեւ չունի բարձր աստիճան կամ հարստութիւն, սակայն իր տաղանդը և գէպի ժողովուրդը ունեցած իր նուիրումը, իրեն համար ընդհանրական զմայլում մը ստեղծեցին: Բոլոր ժամանակակիցներ, որ կուսակցութեան ալ որ վերաբերած ըլլային, զովեւտ ունէին միայն իրեն համար: Իր ատենաբանութիւնները լի էին ընդարձակ խորհուրդներով և ուշագրաւ օրինակներով, անոնք կը ներկայացնեն այլ եւ այլ նիւթեր, լոյսերու զանազանութեամբ այնպիսի հեշտակն եղանակաւ, եւ արտայայտութեան այնպիսի վսեմութեամբ որ կրնանք զանոնք օրինակ համարիլ ազատ, բնական եւ ուժգին ատենախօսութեան: Իր սկզբնատիպութիւնը, փրկիստփայլական եղանակը եւ խորունկ տրամաբանութիւնը, կ'ընեն զինքը այնպիսի ատենաբան մը, որ կրնայ շահեկանութեամբ կարգադրիլ, իր յուզած խընդիրներուն ժամանակը երկար ատեն անցնելէն վերջն ալ:

ՅԱԿՈՒՌՈՍ Հ. ՃԷՃԻՉԵԱՆ

մեռած էրկան իշխանութենէն, եւ չափահասինն ալ՝ իր դաստիարակի անդրեցութենէն, ուղղակի կ'ակնարկեն Մովսիսական դրութեան ծիսական եւ քաղաքային մասին, եւ ոչ բարոյական օրէնքին: Սակայն մենք կը բողոքենք սովորական դարձած այս տեսակ բաժանման դէմ: Այս տեսակ զանազանութիւն կամ բաժանում՝ ոչ Հին և ոչ ալ Նոր Կտակարանի մէջ ճանչցուած է: Օրէնքը այս տեսակ մասերու բաժնելու սովորութիւնը վերջին դարերու վերաբերեալ գործ մըն է: Այս տեսակ բաժանում մը յատուկ բերել թէեւ շատ դիւրին է մեզի համար, սակայն կատարելապէս անարդարացի է եւ ճամբայ կը բանայ ամէն տեսակ ծիսապաշտական դրութեան: Ոչ Քրիստոս, ոչ առաքեալները՝ բարոյական եւ ծիսական օրէնքի մէջ խտիր կը դնեն, երբ կը խօսին օրէնքի խափանման և կամ հաստատման վրայ: Ս. Գիրքը միեւնոյն կարեւորութիւնը կուտայ երկու տեսակ օրէնքներուն ալ եւ Հին Կտակարանի մէջ այս տեսակ բաժանում չիկայ: Եթէ ժողովուրդը կրնար համբերել, Աստուած զանազան կանոններն ալ տասը պատուիրաններուն պէս իր բերանովը պիտի խօսէր: Մնացեալ պատուիրաններուն Մովսէսի բերնով խօսուելուն բուն պատճառը ասոնց նուազ կարեւոր ըլլալը չէր, այլ ժողովուրդին անանկ պահանջելն էր. (Ելից 20/18-21): Ասկէ զատ Ելից 24/12էն կը հասկնանք թէ Աստուած ամէն տեսակ օրէնքը իր ձեռքովը Մովսէսին յանձնեց: Մինչեւ իսկ Յիսուս միւս պատուիրաններէն ոմանց Տասնաբանեայէն աւելի կարեւոր ըլլալը հռչակեց. (Մատ. 22/35-40):

Հիմնական խնդիրը սա է. օրէնքը—ամբողջ օրինական դրութիւնը—Քրիստոսով վախճանած է թէ ոչ: Մեր Տէրը մովսիսական օրէնքը առանց արելու, կատարելով կը խափանէ: Յիսուսի «օրէնքէն յովա մը կամ նշանագիր մը պիտի չանցնի, մինչեւ որ բոլորն ալ կատարուի» խօսքէն ո՞վ կրնայ հետեւցնել թէ՛ Ան ըսել ուզեց թէ

օրէնքին երկու երրորդը՝ այսինքն քաղաքային ու ծիսական մասը 20 դարերու աջ խափանուած են, իսկ միւս մասը Քրիստոս ուղղակի կ'ըսէ. «Ես օրէնքը արելու չեկայ հապա կատարելու»: Օրէնք մասերու բաժնելու սովորութիւնը Քրիստոս բոլորովին անձանթ և օտար գաղափար մըն է: Անոր համար Հին Կտակարանի «օրէնքը» անբաժանելի անբողոքութիւն մըն է թէ Քրիստոս օրէնքը կատարած է, զայն իր ամբողջութեամբը կատարած է եւ մասամբ, Սակայն օրէնքը կատարել ի՞նչ նշանակէ: Օրէնքին բոլոր հրամանները Քրիստոս կատարելապէս պահելով՝ կատարեց զանոնք: Տարվ յիմեան մեծ ճշմարտութիւն որուն լոկ օրինակն էին ծէսերը՝ իրականացուց զանիկա: Մեսիան որ օրէնքները մեծագոյն առարկան էր՝ լիութի օրինակ նկարագիր մը ցոյց տալով իրագործեց զանոնք: Իրաւամբ Լագդանդիոս Քրիստոս «կենդանի եւ ներկայ օրէնք» կը կոչէ Հրէական Հին կրօնին մէջ՝ անկատարութիւն թերութիւն կար: Յիսուս իր օրինակի կեանքովը զայն իր բարձրագոյն կատարելով կը հասցնէ: Քրիստոս օրէնքին մէջ եղբարոյական թերութիւնները ճանչնալով՝ անոնց տեղ՝ արդարութեան եւ ուղղութեան բացարձակ սկզբունքները դրաւ, որոնք արդարական են: Ան բացարձակ ճշմարտութեան և բարութեան մշտնջենական սկզբունքները հաստատեց եւ մերկայցնանաւ օրէնքը անոր շուրջը զիջուած չափազանցութիւններէն: Լերան բողոքին մէջ «օրէնքը կատարելու եկայ» խօսքին նշանակութիւնը՝ խաչափայտին վերջէրը «ամէն բան կատարուեցաւ» ըսաւ, կատարելապէս մեկնեց զայն: Քրիստոս մահովը օրէնքին գիրը գերեզմանին լաղեց՝ սակայն անոր հոգին ցոյց տուած Հին Կտակարանի բարոյական տարրն ալ Յիսուսի գաղափարական բարոյականութեան մակարդակին չէր հաւասարէր, իր մահովը

դրութեան թէ ծիսական եւ թէ բարոյա-
կան ըսուած մասը խափանելով՝ անոնց
տեղ Աւետարանի նոր դրութիւնը հաստա-
տեց :

Սակայն պէտք է ըմբռնել թէ, նորը ոչ
թէ հինը կործանելով, այլ կատարելով
անոր տեղը կը բռնէ: Նորը հինը ոչ կը մերժէ
եւ ոչ ալ կը վտարէ, այլ կը պաշտպանէ
ու կ'ամփոփէ այն տարրերը՝ որոնք մշտնա-
ջենական արժէք ունին աշխարհի կրօնին
համար: Ուստի նոր դրութեան հին դրու-
թեան տեղ հաստատութիւնը, բնակա-
նորէն օրինաւոր ընթացք մըն է: զարգացման
այս քննական օրէնքով քրիստոնէական
կրօնին մէջ նորը՝ հինէն առաջ կուգայ
և այս պատմական յառաջացումին մէջ, ինչ
որ անկատար ու առժամանակեայ է եւ կամ
անպէտ, ըստ ինքեան կ'իյնայ եւ ինչ
որ էական եւ մշտնջենական օգտակարու-
թիւն ունի, պահպանուելով եւ ամփոփ-
ուելով՝ քրիստոնէութեան կը փոխանցուի,
աւելի զարգացած, յարմարցուած եւ զօ-
րացած վիճակի մը մէջ: Նորին մէջ հին ըս-
կզբունքները՝ բարձրագոյն շարժառիթներով
աւելի ընդարձակ մակարդակի մը կը բարձ-
րանան: Ինչպէս որ ծաղիկը իր պաշտօնը
կատարելով պտուղ մը առաջ կը բերէ եւ
յետոյ կ'անցնի, նոյնպէս ալ մոզսիական
դրութիւնը իր պաշտօնը կատարելով՝ անոր
կը յաջորդէ նոր դրութիւնը:

Հետեւաբար հին դրութիւնը իր բոլոր
մասերով կատարուած եւ անոր մշտնջենա-
կան արժէք ունեցող մասը Աւետարանին
մասը եղած է: Քրիստոնեաներ պէտք չէ որ
միայն հինին նային վասնզի Աւետարանը անոր
կատարելութիւնն է: Հին կտակարանի բո-
լոր էական մասերը նորին մէջ պաշտպան-
ուած են, եւ անոնք իբր Աւետարանի մասեր՝
քրիստոնեաներու վրայ պարտաւորիչ են,
բայց ոչ իբր հին դրութեան մէկ մասը: Ուս-
տի, «Տասնարանեան քրիստոնեաներուն
համար պարտաւորիչ է» հարցումին կը պա-
տասխանենք թէ՛ իբր հին անտեսութեան
ձեւովը և իբր այդ դրութեան մէկ մասը՝
ոչ՝ Լուսեր կ'ըլլէ: «Օրէնքը Հրէից կը պատ-

կանէր» եւ շեշտելով տասնարանեան՝ կը
յայտարարէ թէ՛ ան ալ մեզի չվերաբերի,
թէ «Մովսէս մեզ եզրիպտոսէն չհանեց, այլ
միայն Հրեաները: Մովսէսը կրնանք նկա-
տել մեր ուսուցիչը՝ սակայն ոչ մեր՝ քրիս-
տոնեաներու օրէնսգէտը, մինչեւ որ ան
Նոր կտակարանի եւ բանական օրէնքին հետ
չհամաձայնի»: Միւս կողմէ՝ քրիստոնեան
հոգիի հեղինակութեան տակ ըլլալով, Մով-
սէսի բարոյական սկզբունքներուն հակա-
ռակ ո եւ է յանձանքի մէջ չկրնար գտնուիլ:
Քրիստոնեայի մը մարդասպանութիւն ու
չնութիւն չընելուն բուն պատճառը՝ անոնց
Տասնարանեային մէջ արգելուած ըլլալը չէ,
այլ Քրիստոսով՝ անոնց արգիլման տրուած
նոր կեանքն է: Տասնարանեային էական
գոյութիւնը արդարութեան անփոփոխելի
սկզբունքներէն կը բաղկանայ՝ եւ այդ
պատճառաւ, ան քրիստոնէութեան մէկ
մասն է, եւ միայն այդ նշանակութեամբ
քրիստոնեան պատուիրանքներու ատակ է:
Ձոր օրինակ՝ ծնողքի հնազանդութիւնը Ա-
ւետարանի մէջ յաճախ կրկնուած է: Ինչ-
պէս Տասնարանեային մէջ: Հին օրէնքին
մէջ հնազանդութեան շառժարիթը՝ Քանա-
նի երկրին մէջ երկայն քնակութիւն մը ու-
նենալ է: Սակայն ասիկա քրիստոնեային
համար այն նշանակութիւնը չունի: Քրիս-
տոսի Աւետարանը Աստուծոյ ճշմարտութեան
նոր յայտնութիւնն է:

ՓԱՌՆԱԿ ԻՍԻԷՆՏԷՐԵԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Երիզա. Յ. էֆ. — Ստացած ենք չնոր-
հակալութեամբ: Ձեր ծրարին մէջ կ'աւել-
ցնենք հատ մըն ալ: Ուրի՞նչ մըն է որ պիտի
դրկուի Գեր. Տ. Արտաւազգոյ վրդ. ի թէ
թէ Ձեր յանձնարարածն է:

Ասաբազար. Մ. էֆ. ձ. — Տայլերեան
էֆ. ի յանձնարարութեամբ էր որ կը զրկուէր
Ձեզ, և Ձեր յանձնարարութեան մասին ոեւէ
զեկոյց չէր եղած մեզի: Ատոր համար՝
թիւրիմացութիւնը:

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ

(ԾՆ. 1153. — ՎԽՃՆ 1198 ՅՈՒԼԻՍ 14)

Բ.

Ստո՛յգ է որ՝ Լամբրոնացին գժուարու-
 թիւններ ալ կրեց, բայց աօի պարզապէս
 առանց քննութեան գոհացում մըն եր զրպար-
 տիչներու համար, որուն դէմ ուժգնապէս բո-
 ղոքեց Տարսոնի Արքեպիսկոպոսը իր նշանաւոր
 թուղթով եւ արդարացուց ինքզինքը այն-
 պիսի կորովի եւ իմաստուն փաստաբանու-
 թեամբ մը, որ միշտ կ'ազդէ անաչառ եւ
 քննամիտ ընթերցողին վրայ: Լամբրոնացին
 ա՛յնքան անկեղծ էր իր յայտարարութիւն-
 ներունմէջ, ամուր՝ իր գիտցածներուն մէջ
 եւ ա՛յնքան իրաւացի՝ իր պաշտպանած եկե-
 ղեց, դատին մէջ որ մեծ համակրութիւն
 չաճեցաւ եւ իրմէ կարող մէկը չգտնուեցաւ
 1196ին իբր ներկայացուցիչ Հայ. Եկեղեցւոյ,
 պատուիրակ զրկուելու եւ ուղղակի խօսելու
 համար միութեան խնդրոյն վրայ Պոլիսի մէջ
 եւ պաշտպանելու իր շատ սիրած եկեղեցւոյն
 ուղղափառութիւնը Յոյն Եկեղեցւոյ առջեւ:
 Իսկ Գրիգոր Տղայ Կաթողիկոսի սա յայ-
 տարարութիւնը իր մահուան ատեն Լամբ-
 րոնացիի նկատմամբ թէ «հարստահարեալ
 եմ ես զքո մարդասիրութիւնդ մարդահանոյ
 կամօք», ամէնէն մեծ յայտնութիւն մըն է,
 որ պատիւ կ'բերէ Լամբրոնացիի: Թէ ի՞նչ
 ըրած է Գրիգոր Տղայ Լամբրոնացիին, չենք
 գիտեր. շատ հաւանական է որ պահ մը Լե-
 ւոնի թեր ելած ըլլայ Հայոց Կաթողիկոսը,
 մարդահանոյ կամօք, եւ Տղայն, որ իր բոլոր
 կեանքին մէջ Շնորհալիին ուղեգծէն չչեղե-
 ցաւ եւ ճիշդ Լամբրոնացիին ծանօթ թուղ-
 թին ոճով ինքն ալ նշանաւոր թուղթ մը
 գրեց Ձորայգետի վարդապետներուն, այնպէս
 որ այդ երկու թուղթերուն մէջ միեւնոյն
 սկզբունքները միեւնոյն ոճով եւ միեւնոյն
 ուժգնութեամբ պաշտպանուած են: Տղայն,
 որ ամէն կերպով համաձայն էր Լամբրոնա-
 ցիի հետ պահ մը մարդահանոյ կամօք՝ կ'ի-
 ըրատահարէ Լամբրոնացին. իսկ սա՛ անյոզ-

դողդ կ'մնայ իրենց ուղղութեան մէջ, մա-
 դահանոյութիւն չընէր, եւ Կաթողիկո-
 թիւններու համար, մահու-
 մահճին մէջ ներողութիւն կ'իւնդրէ Լամբ-
 րոնացիէն՝ յայտարարելով թէ իր ըրած հե-
 ըրատահարութիւնը՝ մարդահանոյութե-
 արդիւնք մըն էր լոկ: Գրիգոր Տղայ ա՛յ-
 չափ մեծ մարդ մ'էր որ, ուրիշ կերպ
 չէր կրնար վարուիլ եւ ասով պատմութե-
 մէջ կ'արձանացնէ վկայութեան ամէն-
 անվկանդ մէկ կոթողը Լամբրոնացին արդ-
 րացնելու համար:

* * *

Գալով գոլպիոխութեան խնդրոյն, զ-
 Աղաբէկեան ուղղակի կ'վերագրէ Տարսո-
 արքեպիսկոպոսին, իբր թէ սա իր «Լատ-
 նասէր եւ Հոռոմասէր բնոյթովը վեր է ատ-
 Լատինացոցմէ կամ նոյն իսկ այդ Պասգ-
 րատբերտ անուն Սքուստիքոս վարդապ-
 տէն այդ բացատրութիւնը եւ ներմուծել
 Հայոց պատարագամատոյցին մէջ», սո՛ւտ:

Լամբրոնացին ատանկ բան չէ՛ ըրա-
 ա՛յս է իրողութիւնը:

Պատարագամատոյց բառը, ի միջի այլ-
 երկու նշանակութիւն ունի. նախ կ'նշանա-
 պատարագ մատուցանող, պատարագիչ՝ ք-
 հանայ. — Զոր օրինակ. «Ո՛չ ունել քահ-
 նայից՝ յԱստուծոյ եւ ի մէնջ հրաման՝ աստ-
 ծածկութի պատարագամատոյցին զգեներոյ՝ մե-
 տուցանել զուրբ պատարագն, կամ Աւ-
 տարան կարգալ, կամ խաչ առնուլ ի ձեռ-
 կամ յայլ ինչ ի սրբութիւնն մերձենալ
 (Ընդհանրական, առ Քահանայս), Երկրորդ
 կ'նշանակէ խորհրդատե՛ս, այսինքն՝ ա-
 գրքոյկը կամ տետրակը, որուն համեմա-
 կ'կատարուի սրբազան խորհուրդը: Ար-
 քեկեան այս իմաստով կ'գործածէ պատ-
 րագամատոյցը. բայց Լամբրոնացին պատ-
 րագամատոյցը = խորհրդատետր չէ՛ գրա-
 այլ՝ մեկնած է զայն. հետեւաբար Հայ. Ե-
 կեղեցւոյ պատարագամատոյցին մէջ Լամբ-
 րոնացիէն ներմուծուած բացատրութիւն չի-
 եւ պատարագամատոյցի մեկնութեան մ-
 տրուած բացատրութիւնն ալ մասնաւոր-

պէս ո՛ր և է աղերս չունի Լատինական կամ նոյն իսկ այդ Պատգաս Բատրերտի բացատրութեան հետ :

Վասնզի Լամբրոնացին իր առջեւը ունի խորհրդատեար մը, որուն մէջ կա՛յ Ս. Գրիգոր Նարեկացիին աղօթքը, «Ամենակալ բարերար» (Բան ԼԳ. Դ—Ե) :

Նարեկը աւարտած է 1004ին, այսինքն՝ ժԱ. դարուն ճիշդ սկիզբը : Հնտեւաբար այն խորհրդատեարները, որ Նարեկացիին աղօթքը կ'ըզմանդակեն, գրեթէ նոյն և հաւասար են անոնց, որոնք հիմայ կ'գործածուին և ասոնք էին որ կ'գործածուէին Լամբրոնացիի ատենն ալ : Իսկ Լամբրոնացին պատարագի մեկնութիւնը գրեց 1177ին երբ քաղաքը տարեկան էր և կ'ապրէր «ի յոռութեան և ի միայնութեան ի մէջ լեռանց Տօրոսի» :

Արդ՝ Լամբրոնացիին գործածած, հետեւաբար այդ դարուն մէջ գործածուած խորհրդատեարները ունին սրբագործութեան սա՛ աղօթքը. «Որով զհացս օրհնեալ՝ մարմին ձՆՄԱՐՏԱՊԷՍ արասցես Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ զգինիս օրհնեալ՝ արիւն ՍՏՈՒԳԱՊԷՍ արասցես Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Տե՛ս էջ 108, Խաղաղաձուրիւն Սրբոց. Պարզի՝ Տպ. 1842, Երուսաղէմ) :

Իսկ մեր հիմակուան գործածածները ունին «Որով զհացս օրհնեալ՝ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի». (երեք անգամ կ'կրկնուի) : «Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի» (նոյնպէս երեք անգամ կ'կրկնուի) : «Որով զհացս և զգինիս օրհնեալ մարմին և արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, փոխակերպելով ձօգուով քով Սրբով» (նոյնպէս երեք անգամ կ'կրկնուի) :

Ինչպէս որ կ'երեւի՝ Լամբրոնացիին գործածած օրինակը չունի երբզս կրկնումները և այդ օրինակի սրբագործութեան աղօթքին բանաձեւը հիմակուան խորհրդատեարներու կ'ձօտենայ գրեթէ՛ և չունի «փոխակերպելով ձօգուով քով Սրբով» յաւելուածը :

Բայց Լամբրոնացին կ'գործած է փոխակերպել և վերափոխել ձեւերը իր մեկնութեան մէջ և կ'վարդապետէ թէ «զայս հացս ա՛ն ի ձեռն Միածինդ քո և օրհնեաց և մարմին իւր կատարեաց, և զայս գինիս սրբեաց և արեամբ ուխտ նոր ընդ մարդիկ կուեաց. և որպէս զհաց և զգինի՛ ետ մեզ զլիշատակ անօրէնութեան իւր մեզ կերակուր և ըմպելի. և ըստ որում այս՝ ճշմարիտ մարմին զգալի և սա՛ ըմպելի, այսպէս և դա՛ հաստատապէս մարմնովս իմով մեռանի» . . . ապա զսոյն՝ որ յինէն (= քահանայէն) նշանակ մարմնոյն Քրիստոսի և ապացոյց մատուցաւ, իջմամբ Հոգւոյն նմին՝ մարմին ճշմարտապէս փոխակերպելու յօրինակէ և կատարել թախանձեմ. քանզի ասեմ. զհացս՝ զոր էս օրինակ մարմնոյն Քրիստոսի եղի առաջի և սովաւ զճշմարիտ նորին խորհուրդն ցուցի, զուայսուհետեւ օ՛ժ Հոգւովդ՝ և յօրինակէն ի ճշմարտութիւն վերափոխեալ : . . . Այսպէս և նշանակքս (= հաց և գինի) մարմնոյն և արեան Քրիստոսի՝ մինչեւ ցայժմ ապացոյց էր առաջի Աստուծոյ եղեալ ի քահանայէս և բանաւորն պատարագի՝ նշանակ հաստատութեան. իսկ առեալ Աստուծոյ Հօր ընդ բանաւորն պատարագի և զօրինակս նորին, և իրրեւ զԱստուած կարող տիրապէս շնչեաց զկենդանարարն Հոգի յանշունչս մարմին և արար զսա՛, որ նախ զգալի մարմին, այժմ Հոգւովն Սրբով՝ Քրիստոսի մարմին և միութեամբ ընդ գինիս Հոգւոյն Քրիստոսի զսա արիւն նմին էացուցեալ կատարեաց : . . . Ի սա միացեալ Հոգին Աստուծոյ և արարեալ մարմին Քրիստոսի, նիւթոյս ո՛չ լինի այլալուրթիւն կամ առաւելութիւն. այլ միայն՝ զի իմանալի գօրութիւն ընկալաւ և ի ճաշակողսն զիւրն կատարէ ներգործութիւն» (Նոյն անդ) :

«Որով մեռեալ նիւթն կենդանացաւ և անշունչն հոգիացաւ և ապացոյցն ճշմարտացաւ և նշանակ մարմնոյն Քրիստոսի անստգիւտ հաստատութեամբ մարմին Քրիստոսի կատարեցաւ : Իսկ մարմին Քրիստոսի յորժամ լսես, բանաւորայե՛ս իմա զխորհրդոյս զօրութիւն և մի՛ տարակուսանաք յան-

բան հաւատն յենուր ըստ արտաքին բարձրացող հաւատալ և իմացողական մտաց հաւատով մնալ անհաւան, տեսեալ զի զոր մարմին և արիւն անուանեն, ո՛չ է միս և արիւն, այլ հաց և զինի: Այլ գիտեա՛ զի մարմին Քրիստոսի հաւատամբ զսա լաղազս հոգւոյն Քրիստոսի ի նոյնս բնակելոյ. (Ա՛նդ էջ 110—111):

«Իսկ նա (=Հոգին) եկեալ յանուն Քրիստոսի և նովաւ և ի նմանէ՛ զհացս արար մարմին Քրիստոսի. այսինքն՝ ո՛չ ըստ որակութեան փոխեալ ի միս եւ յարիւն. այլ զի՛նչ. համանունաբար անուանին և են մարմինք ի չորից տարերց բաղկացեալք, որպէս միսն և հացն և որպէս զինին և արիւնն և չէ՛ ի սոցա բնութեանց զանազանութիւն, այլ որակութեանց միայն: Արդ նոյն Հոգին, որ էջ և եկաց ի վերայ մարմնոյն Քրիստոսի տնօրինաբար և օժ զնա Քրիստոս ըստ մարմնոյ՝ զմիշտ օժեալն անճառ միութեամբն Որդւոյ, նոյն ինքն և այժմ էջ յառաջի եղեալ նշանակս մարմնոյ և արեան՝ ի հացս և ի զինիս՝ և օժ զօրութեամբ զհամեմութիւնս մարմնոյն Քրիստոսի՝ հոգին Քրիստոսի մարմին Քրիստոսի: Հոգին Քրիստոսի առեմ՝ իբր տնօրինաբար առեալ ի Հօրէ և ո՛չ եթէ ի նմանէ բղխեալ: Յաղագս արոյ և զսոյն մարմին Քրիստոսի կատարեաց ըստ բնութեան մարմնոյ և ըստ հոգւոյ. եւ զօրութեան եղեալ մարմին Քրիստոսի եւ ո՛չ ըստ գունոյ կամ որակութեան, այլ զի հոգին Քրիստոսի ի սա, սոյն՝ ճշմարտապէս մարմին Քրիստոսի, որպէս եւ լոյս արեգական ի յօդ խառնեալ՝ օդն ի լոյս փոփոխի» (Ա՛նդ էջ 112):

Ահա՛ Լաւերոնացիին տուած մեկնութիւնը գոյափոխութեան մասին. և իր բոլոր բացատրութիւնները, որ այդ խնդրին շուրջ կ'ըզանան, միեւնոյն սկզբունքի վրայ հիմնուած են, այսինքն՝ հացն ու զինին ճշմարտապէս Քրիստոսի մարմինը կ'ներկայացնեն Սուրբ Հոգւոյն զօրութեամբը. զօրութեամբ միայն և ո՛չ թէ «ըստ գունոյ կամ որակութեան»:

Այսպիսի ըմբռնում մը, որ Լաւերոնացիին

ամար չափազանց չէ՛ և այդ դարերու աստուածաբանական տեսութիւններուն համեմատութեամբ իսկ՝ դեռ հեռի՛ է լատինական ըլլալէ, Հայ. եկեղեցւոյ վարդապետներուն օտար չէ՛: Այսինքն՝ թէպէտեւ Հայ. եկեղեցւոյ մէջ պատօճապէս (ժողովքով) խնդրոյ առարկայ եղած չէ՛ հաղորդութեան խորհուրդը, ինչպէս նաեւ պատօճապէս խնդիր եղած չէ՛ր Լատին. եկեղեցւոյ մէջ ալ մինչեւ Տրիտէնթեան ժողովին ժԳրդ նիստը (1551), ո՛ւր ընդունուեցաւ transsubstantiationի= գոյափոխութեան վարդապետութիւնը, բայց Հայ. եկեղեցւոյ միջին դարու վարդապետներ գրած են այս մասին իրարմէ տարբեր եղանակով:

Այսպէս՝ Իգնատիոս Ծնորհալի, Ղուկասու աւետարանին մեկնիչը, դեռ կ'պահանջէ հնագոյն ըմբռնումը (ոչ-գոյափոխութեան հաղորդութեան մասին):

— «Արդ՝ այսր խորհրդածութեամբ (տունլուայով) նորոգեալ զնոսա վերստին ծըննդեամբն՝ աւանդէ նոցա յետ այսորիկ լիտորհուրդ մարմնոյ և արեան իւրոյ, զի զայն ունեցիմք յիշատակ մահու նորա միտք կատարել զնա. ըստ որում որ ի Մոզսիս աւանդեցաւ պահել զյիշատակ գառնին, որով եղեւ ազատութիւն նոցա: Եւ աստ յիշատակ արեան նորա՝ որ հեղաւ վասն ազատելոյ զամենեսեան ի ծառայութենէ մեղացն, յաղագս որոյ ասէ «զա՛յս արարէք առ իմոյ յիշատակի: Եւ Առաքելոյ ասացեալ. «բանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք զմահ Տեանն պատմեցէք մինչեւ եկեսցէ նա» Ա. Կրնթ. ԺԱ. 26, Արդ՝ այսպէս աւանդեաց մեզ զյիշատակ մահուան իւրոյ, զի որքան հազորդիք յիշեմք զկամաւոր չարչարանս նորա, զի վասն մեր համբեր նա» Տե՛ս էջ 409. Մեկն. Ս. Աւետ. որ ըստ Ղուկայ. ապ. Կ. Պոլիս 1824):

ԲԱՅԳԻՆ ՎԱՐԴ



ԲԺՅԿԱԿԱՆ ԷԶԵՐ

ՏԱՐՈՐԻՆԱԿ ՀԻՒԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Ք Ն Ա Խ Տ Ը

«Քանի՜ բժշկական արհեստը զարգանայ, այնքան ալ հիւանդութեանց տեսակները կը շատնան» ի ժողովուրդական կարծիքը, կարծես երբեմն իրական ըլլալու պէս կը թուի. տեսած եմ շատեր՝ որոնք կ'ըսեն թէ՛ հին ատենները չկային այսքան տեսակ հիւանդութիւններ՝ ու քան հիմա կան: Սակայն ստուգութիւնը սա է թէ՛ հիւանդութիւնները հիմա աւելի մանր դասակարգելու բաժնուած են, քան թէ՛ հին ատենները: զոր օր. ինչ որ հին ատենները ջերմ կը կոչէին, հիմա այդ ջերմը շատ մը ստորաբաժանումներու բաժնած են:

1901ի սկիզբները երկու մահացու հաճախակներ բժշկական աշխարհին ուշադրութիւնը իրենց վրայ հրաւիրեցին. ասոնք կամ նոր ծագում առած հիւանդութիւններ էին, և կամ եթէ առաջուց կային՝ մինչև վերջերս բժշկական աշխարհին ուշադրութենէն վրիպած էին: Ատոնցմէ մէկը որուն բնոյթը ծանօթ չըլլալէն զատ, անուն իսկ չունի, հիւսիսային սառուցեալ գօտիի բնակիչներուն յատուկ հիւանդութիւն մըն է: Սաչափը միայն ծանօթ է այդ խորհրդաւոր հիւանդութեան մասին թէ, քանի մը տարուան միջոցին կրինլէնտի բնակիչներուն թիւը 50 առ հարիւր պակսեցուցած է:

Միւս հիւանդութիւնը որ արեւելեան Ափրիկէի կողմը, Ուկանտաի մէջ համաճարակի հանգամանք մը առած է, «քնախտ»ն է (The sleeping sickness): Այդ հիւանդութենէն բռնուած մէկը շարունակ կը քնանայ, եթէ մասնաւորապէս արթուն պահելու ջանք չըլլուի ենթական:

Այս պարմանալի հիւանդութիւնը որ երբեմն ալ խափօթիկի փուռ կամ անզգայութիւն կը կոչուի, առաջին անգամ Ուկանտաի մէջ նշմարուեցաւ տեղին միսոնար բժիշկներու կողմէ. նաեւ տեսնուեցաւ որ այս հի-

ւանդութիւնը իր ամենաստտիկ նախնիները կը գործէր Վիքթորիա Նիանզա լիճին հիւսիսային եզերքը, Պիւտոկոի և մանաւանդ Վիքթորիա Նեղոսի արունքին վրայ. տեղացի մեծեր, որ այս հիւանդութենէն բռնուածներուն ցուցակը կարելի եղածին չափ պահած են եղեր, կը հաստատեն թէ՛ մինչեւ հիմա 50,000 տեղացիներ մեռած են անկէ:

Անցեալ տարւոյ սկիզբները, Բրիտանական Արքայական ընկերութիւնը, կտաւալութեան աջակցութեամբ, բժշկական մասնախումբ մը կարգեց, մասնաւորաբար այդ հիւանդութիւնը ուսումնասիրելու համար. դեռ քանի մը շաբաթ առաջ այդ մասնախումբին անդամներէն Գնդապետ Տօքթոր Տէյվիտ Պրուս ծանոյց թէ այդ հիւանդութեան արիւնը շատ անգամ մանրացոյցով զգուշութեամբ քննելէ վերջը, սա եզրակացութեան եկած են թէ՛ անոր պատճառը խիստ փոքր որդ մըն է (Trypanosma Gambiense) որ վարակեալին արիւնին մէջ կը գտնուի և ուրկէ ուղեղատառոնածուծարին (Cerebro-spinal) հեղուկին մէջ կ'երթայ, ուր ուղեղային նիւթին վրայ այն տեսակ ազդեցութիւն մը յառաջ կը բերէ որ՝ վարակեալը միշտ քնանալու վիճակի մը կ'ենթարկէ: Նաեւ հաստատուած է որ այս հիւանդութեան սերմերը, տեղային լեզուով, ցեցե կոչուած ճանճերով (Glossina palpalis) վարակեալէ մը առողջին կը փոխանցուին, պայման չէ թէ առողջը՝ որուն հիւանդութեան սերմերը կը փոխանցուին. անպատճառ մարդկային նեոէն ըլլայ, որովհետեւ տեսնուած է որ նոյն իսկ կապիկին ալ վրայ ձիշտ միեւնոյն ազդեցութիւնը յառաջ կը բերեն:

Մասնախումբը իր անդեկագրին մէջ կը պատմէ նաև երկրին ներկայ վիճակին և համաճարակին բնոյթը բացատրող քանի մը տեսարաններ, զորս կ'ուզեմ նոյնութեամբ մէջ բերել. «քանչելի, բնական տեսարաններով երկիր մը, անտառախիտ և ջրարբի, անտարակոյս ժամանակաւ չէն և բազմաբնակ, սակայն հիմա ամայի և անբնակ:

օրերով կը ճամբորդէինք պանանաի տընկատաններու մէջէն, որոնք լուռ վաղեմի ատոններու վերածուած էին. ճամբաները բոյսերու խտութենէն անհետացած էին և մարդկային կենդանութեան հետքեր ալ չկային: Շատ անգամներ մեր անցած ճամբուն վրայ դիակներու կը հանդիպէինք ու ամէն անգամ ալ կը հարկադրուէինք ուշադրութեամբ քննել զանոնք, վստահ ըլլալու համար թէ՛ քնացած մա՞րդ մըն է թէ ստուգիւ մեռած, որովհետեւ ա՛յնչափ քնացող մարդու նմանութիւնը ունէին: Անգամ մը հանդիպեցանք պառկած մարդու մը՝ որ աչքերը գոցած, ծունկերը վեր քաշած, մէկ ձեռքին մէջ բաց հովանոց մը կը բռնէր. ծունկին վրայ նշան մը կար, ուրկէ, շատ հաւանական է, ամէն անցնող բռնած էր զայն արթնցնելու համար, պարզապէս խորհելով թէ կը քնանայ: Ուրիշ անգամ տեսանք կիտ մը, որ կանաչներէ շինուած ամպհովանիի մը տակ նստած երեւութապէս խոր կը քնանար, սակայն, իսկապէս մեռած էր: Ատենը անգամ մը ճամբէն քիչ մը հեռու գայլերէ յօշոտուած մարդկային մարմինի մնացորդներու կը հանդիպէինք: Շատ մը թափուր անմաքուր խրճիթներ և տեղ մը, նոյն իսկ ամայացած ամբողջ գիւղ մը լռեեալան կը պատմէին իրենց պատմութիւնը:

«... Երբոր ընտանիքի մը անդամներէն մէկը այս հիւանդութենէն բռնուի, անմիջապէս կը մեկուսացուի և զատ խրճիթի մը մէջ կը դրուի, սակայն եթէ ընտանիքի մը մէկէ աւելի անդամները վարակուած են, մնացեալ առողջ անդամները հոնկէ կը ձգեն ու կը հեռանան»:

Քնախտը, կամաց յառաջացող հիւանդութիւն մըն է, երբեմն ամիսներու կը կարօտի մինչեւ որ մահացու վախճանին հասցնէ եսթական. հիւանդութեան առաջին աստիճանին մէջ երեւալիք որոշ նշանները հետեւեալներն են: Յօդուածներու մէջ ցաւ, գեղցերու ուռեցք, շարունակ քնանալ և ընդհանուր տկարութիւն. սակայն երբ հիւանդութիւնը կը յառաջանայ, քնանալը աւելի

երկարատեւ և անընդհատ կ'ըլլայ, հիւանդը աստիճանաբար ինքզինքին հոգ տանելու կարողութիւնը կը կորսնցնէ, նիհարնալ կը սկսի, մինչեւ այն աստիճան որ, այլ եւս անկարող, կ'զգայ մինչեւ իսկ սողոսկելով դուրս, սենեակին տակ երթալու. և եթէ չունի մէկը որ իր այս վիճակին մէջ իրեն հոգ տանի, շուտով կը մեռնի, կամ հիւանդութենէն, կամ անօթութենէն և կամ անպատասպար մնալէն:

Այն աստիճան մահացու է այս սոսկալի հիւանդութիւնը որ անկէ վարակուած մէկը աղատած չէ գրեթէ:

ԼԵՒՈՆ ՍԻՆԻՆ

Ն Օ Թ Ե Ր

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

Վեր. Կ. Պաղտասարեան 30 տարիէ աւելի է որ կը հրատարակէ Համազգային Օրացոյցը, որուն համետ շահը իր հիմնած Արեւելեան Որբանոցին յատկացուցած է: Աւետարեւի մէջ թելադրած էինք մեր համայնքը, որ ատկէ իւրաքանչիւր Աւետարանական անհատ տարին 40 փարա կամ 3 դահ. վճարելով առնէ հատ մը, անանկ որ անոր շահով գէթ քանի մը անոք տղաք աւելի խնամուին: Կը յուսամ թէ ասիկա ամէն կողմէ ուշադրութեան պիտի առնուի: Վեր. Պաղտասարեան իրօք Համազգային ըրած է իր Օրացոյցը, անոր մէջ ամէն ազգերու տօներն ալ նշանակելով: Կը ներուի՞ ինծի թելադրել սակայն Վեր. Հեղինակին որ մեր Աւետար. համայնքի տօներէն օրացոյցին մէջ զնէ նաեւ Աւագ Հինգշաբթիի, Համբարձման, Սահակ Մեծորայայ տօնները, նաեւ Բողոք. Ժողովուրդին առաջին Ազգապետ Վսեմ. Ստեփանէ Գեղեցեցիի հաստատած տարւոյն վերջին հինգշաբթիի Ծնորհակալութեան Օրը, և Հատ. առաջին շաբթուան աղօթքի եօթնակին յիշատակութիւնները: Բողոք. Հայերու յիշուի նաեւ Կաղանդը:

Ի Ս Ա Շ Ա Կ Ն Ե Ի Տ Ո Ն

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ՄԸ ԻՐ ԿԵԱՆՔԻՆ ՎՐՈՑ

Այս հռչակաւոր փիլիսոփան որ իբրևամբ
 «բնական իմաստասիրութեան հայր» պատ-
 ուանունին արժանացաւ, ծնաւ 1642ին
 Ատտուածորդիին ծննդեան օրը, Անգլիոյ ան-
 նչան մէկ գիւղին մէջ: Իր ծնած դարուն
 իտալացի ձերունի փիլիսոփան՝ Կալիլէոս
 հրաժեշտ տուաւ իր երկրաւոր կեանքին,
 բանտի մէջ: Վերջինը գտած էր ճօճման օ-
 բէնքը որ մեծապէս օգնեց հանճարեղ փիլի-
 սոփային՝ Նեւտոնի իր գլուխ գործոցը հրա-
 տարակելու համար: Ի սահակ որդին էր
 կղերականի մը՝ որուն վաղահաս մահուանէն
 վերջը՝ այրի կինը ամուսնացաւ ուրիշ եկե-
 ղեցականի մը հետ: Տիկ. Նեւտոն իր զա-
 ւակը որդիին բարեսիրտ մեծ մօրը խնամ-
 քին յանձնեց: Ի սահակ դպրոց զրկուե-
 ցաւ: Իր ուսանողութեան առաջին տարի-
 ներուն մէջ խիստ ուշիմ աշակերտի մը ձիր-
 քերը չէր փայլեցնէր իր վրայ: Սակայն ա-
 սով մէկտեղ ատակ էր ան մեքենական գոր-
 ձիքներ շինելու մէջ և աւելցնելու իր բնա-
 գիտական հմտութիւնը՝ օրէ օր, մինչև որ
 վերջապէս ամէնուն ուշադրութիւնը իր վրայ
 դարձուց: Իր յօրինած կարգ մը գոր-
 ձիքները շատերու զարմացման առարկայ
 եղան, վասն զի անոնք կը ցուցնէին պա-
 տանիին մտաւորական մեծ կարողութիւնը:
 Անգամ մը ժամացոյց մը շինեց որ ջուրի
 կաթիլներու անկումին տակ կը գործեր
 սքանչելի եւ ո՛չ թէ անհնարով, Օր մը իր
 մեծ մայրն ու զրացիները տեսան թէ հող-
 մաշարժ փոքր աղօրիք մը շինած էր որ մին-
 չեւ իսկ փչուելով կը դառնար և երբ օդի
 հոսանքին առջև դրուէր ափ մը ցորենը
 բարակ ալիւրի կը վերածէր անմիջապէս:
 Այս ամէնը եւ դեռ շատ ուրիշներ, յայտնի
 ապացոյցներ էին թէ պատանին Նեւտոն
 տէր էր իմացական ու մտաւորական բարձր
 կարողութեան մը և մասնաւոր ընդունակու-
 թիւն մը ունէր բնագիտութեան: Իր առան-
 ձին ժամերը կ'անցընէր մաթեմատիքական
 կամ բնական փիլիսոփայութեան վերաբեր-

եալ գրքեր կարդալով և խոկալով անոնց
 վրայ երկար ժամեր, 1661 Յունիս 16ին
 Բէյմպրիճի Թրինիթի Գօլէճին աշակերտե-
 ցաւ եւ իր ամբողջ միտքը տուաւ
 ուսողութեան, Իր աշակերտութեան չոր-
 րորդ տարիին մէջ գրի առաւ մաթեմատի-
 քական լեզուով Ֆլեքթընս կոչուած վեր-
 լուծական մեթոտի մէջ իր ըրած գիւտերը:
 Կ'ըսուի թէ այս տարիին մէջ էր որ երբ
 լուսնակ իրիկուն մը կը շրջագայէր իր պար-
 տէզին մէջ, յանկարծ լսնձոր մը ինչաւ իր
 գլխուն վրայ: Այս բանը ուշիմ և հանճա-
 րեղ երիտասարդին ուշադրութիւնը գրաւեց.
 ուղեց հասկնալ պատճառը թէ ինչո՞ւ խըն-
 ձորը ուրիշ ուղղութեամբ մը չգնաց այլ ուղ-
 դակի զէպ վար ինչաւ, ուստի բռնեց րնու-
 թեան օձիքը եւ թող շտուաւ՝ մինչև որ
 խլեց անկէ գաղտնիքը ու գտաւ ձգողու-
 թեան սքանչելի օրէնքը որ 6000 երկայր
 տարիներու ընթացքին մէջ գիտուններուն
 անծանօթ կը մնար: Այս հրաշալի գիւտը
 ըրած պահուն՝ Չէ տարեկան երիտասարդ
 մըն էր ան: Քաղցրարարոյ, հեզահամրոյր
 և խոնարհ էր մեծ փիլիսոփան, ուրիշ շատ
 մը ճշմարիտ գիտնականներու պէս: Ինքզին-
 քը կը նմանցնէր փոքրիկ մանուկի մը՝ որ
 գիտութեան ընդարձակածաւալ ծովեզրին
 քով նստած կը խաղայ աւազներուն հետ,
 կը գտնէ ասկէ խեցի մը, անկէ գայլախազ
 մը, մինչդեռ անդին ճշմարտութեան անհուն
 տիեզերքը թագուն կը մնայ իր մտքին առ-
 ջև: Խոնարհամտութեան ինչ չքնաղ օ-
 րինակ, Նեւտոնի գտած ձգողութեան օ-
 բէնքը անհուն ծառայութիւններ մատուցած
 է և կը մատուցանէ գիտութեան երկու
 ճիւղերուն՝ աստեղագիտութեան և բնագի-
 տութեան: Եթէ այս նշանաւոր փիլիսո-
 փան՝ որուն անունը իբրևամբ անջնջելի և
 սիրելի կը մնայ գիտական աշխարհին մէջ՝
 ձգողութեան օրէնքը չգտնէր՝ բնութեան մէջ
 պատահած շատ մը դէպքերու պատճառները
 չպիտի հասկցուէին պէտք եղածին պէս, ոչ
 ոք պիտի կրնար այս եւ այսօրինակ շատ
 մը հարցումներու պատասխանը տալ թէ ի՞նչ

է տեղատուութիւնը, կամ մականթացութիւնը, ի՞նչ են գիշերահաւասարի կանխման, շարժման օրէնքներու պատճառները եւն. : Եւ սակայն Նեւտոնի շնորհիւ, ձգողութեան օրէնքը շատ մը գաղտնիքներու վրայ եղած քողը պատուեց և գոհացուցիչ կերպով պատասխաններ տուաւ կնճառտ հարցումներու : Զգողութեան օրէնքին ի լոյս գալովն էր որ Լըվէսիէ կրցաւ մակարեւել թէ Ուրանոսէն անդին Տրդ մուտրակ մըն ալ ըլլալու է և գրեց Տօքթր.Քօլի որ իր հեռագիտակով խորազննին կերպով նայելով գտաւ Նեպտունը : Նեւտոնի գիւտին շնորհիւ էր որ Մասքելէն գտաւ երկրիս տեսակարար կշիռը : Գիտունները երկրիս կիսատրամագիծը եւ անոր իրական ձեւը գտան ձգողութեան օրէնքով : Այս օրէնքը բանալի մը եղաւ իր գտիչին և շատ մը գիտնականներու ձեռքին մէջ որոնք գիտութեան մէջ իրենց առջեւ փակուած շատ մը դռները բացին, բնութեան մէջ գտնուած շատ մը գաղտնիքներու խորը թափանձեցին և պարզեցին գանձը, ըրին նշանաւոր ու կարեւոր գիւտեր : Վերջապէս Նեւտոնն անգնանատելի ծառայութիւններ մատուցեց գիտութեան, իր գտած օրէնքովը : Անոր անունը պատմութեան մէջ գրուած է փայլուն էջ մը և ան անմահ պիտի մնայ եւ գիտական աշխարհը համակրութեամբ ու երախտագիտութեամբ պիտի յիշէ զինքը : Գիտութիւնը շատ բան կը պարտի անոր : Նեւտոն քաղաքական ասպարէզին մէջ ալ մտաւ և խորհրդարանի ու Արքայական գիտական ընկերութեան մէջ վարած իր կարեւոր ու պատուաբեր պաշտօնեաներուն մէջ շատ օգտակար եղաւ : Այս հոչակաւոր անձը, «իմաստասիրութեան հայրը», մեծանուն փիլիսոփան 1727 մարտ 20ին իր 85րդ տարիքին մէջ բաժնուեցաւ աշխարհէն :

Ա. Կ. ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ



ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ի՞նչ կը ՊԱՀԱՆՁՈՒԻ ԱՌԵՒՑՈՒՐԻ

ՍՄՐԴՈՅՍ

Սիրելի բարեկամս,

Ձեր վերջին նամակին մէջ, Ձեր քաղաքի առեւտրական մարդոց ընթացքին, բարոյականին, աղքատութեան և անպարտաճանաչութեան և շատ մը կէտերու վրայ սխալները ցաւակցօրէն ինձ տեղեկացուցած և մեր հրապարակի ընթացքներու ի՞նչ վիճակի մէջ ըլլալը և ասոնց ի՞նչ միջոցաւ զարման մը ընելու կարելիութեան մասին իմ կարծիքս հարցուցած էիք :

Արդարեւ շատ կը ցաւիմ որ մեր հրապարակին բոլոր գործողներն ալ, բաց ի քան մը տուներէ, որոնք մատի վրայ կը հանրուին, մնացեալները շունին ճշմարիտ քրիստոնէութեան, ուղղամտութեան, պարտաճանաչութեան, գործունէութեան և յառաջդիմութեան ու հարստանալու եռանդ հոս կը տիրէ աղքատութիւն նիւթական աղքատութիւն իմացականի և աղքատութիւն բարոյականի մասին. ամէն մէկ քաղաքի լափոխիդ, օրուան հացի, ապրուստի պարարին է որ պիտի հանդիպիս : Եսի ու դու չահերը միշտ կը պայքարին իրարու հետ հետեւաբար ո՛չ մէկ յառաջդիմութիւն կարելի է սպասել այս տեսակ վիճակէ մը : Անուանապէս քրիստոնեայ են մեր շատ առեւտրական մարդիկ, սակայն իրականութեան մէջ բնաւ. չէ՞ մի որ մարդ մը իր ըրած գործերէն կը ճանչցուի. շատ թերութիւններ կան արդարեւ մեր հրապարակի մարդոց քով, որոնց աղքատ, սնանկացած, յետադեմ վիճակի մնալուն պատճառը որչափ որ ցարդ ուսուցանասիրած եմ, հետեւեալներն են :

1. Չկայ ճշմարիտ խղճամտութիւն :
2. Առեւտր, ընկերասիրութիւն չկայ :
3. Երբ մէկը գործի կ'օկոսի, առանց սկզբունքի և ծրագրի ճամբայ կ'ելլէ :

կէս ճամբան ու եւ անյաջողութեան, ճա-
տորութեան պահուն կը չեղի նպատակէն:

4. Մէկ արհեստի, մէկ ճիւղի, մէկ նը-
պատակի ծառայել չկայ. ագահութեան
պատճառաւ մէկ ձեռքով երկու ձմերուկ
բռնել կ'ուզեն և հետեւաբար առանց կա-
րենալու մէկ հատը իսկ բռնել, յետադիմու-
թեան և կործանումի կը մատնուին:

5. Դրամի և ժամանակի խնայողութիւն
չկայ:

6. Իրենց մէջ ձեռներէց ոգին և հաս-
տատուն կամքը կը պակսին:

7. Փոքրէն սկսելով մեծնալ չեն ու-
զեր: (Ուտագրաւ իրողութիւն):

8. Երբ գործ մը, արհեստ մը կ'ընեն,
դէպ ի բարձրը յառաջանալու իտէպիւն չեն
ձգտիր և ըրած գործերնին լաւագոյն կեր-
պով կատարել չեն ջանար:

9. Խոնարհ արհեստները կ'արհամարհեն,
վրան անգամ չեն նայիր:

10. Երբ կը յաջողին ու կը հարստա-
նան, չեն յիշեր, միտքերնին անգամ չեն
բերեր այն ժամանակները, ուր կեանքի
սանդուղին ստորնագոյն աստիճաններուն
վրայ կը գտնուէին:

11. Պարտաճանաչութիւն չկայ, պարտ-
քերնին, մուրհակներնին օրին վճարել ու
կարգադրելու համար:

12. Ուրիշներու պարտքին համար ե-
րախաւոր կ'ըլլան, սակայն իրը պարտք
չեն ճանչնար. ասոր հետեւանքը սա կ'ըլ-
լայ որ թէ նիւթապէս և թէ բարոյապէս
(վարկով) մեծապէս կը վնասուին:

13. Անխորհուրդ կերպով կը գործեն,
լաւ չեն մտածեր ըրած և ընելիք գործեր-
նուն վրայ, թէ ի՞նչ ընթացքներով կրնան
չափի ու յառաջդիմել, փոխանակ վնասելու
և յետադիմելու:

14. Անձնավստահութիւն չկայ. ընդհան-
րապէս երիտասարդներ կ'ակնկալեն որ ծը-
նողքները կամ բարեկամները իրենց օժան-
դակեն որպէսզի գործ մը ընեն:

15. Փոխանակ իրենց գործերուն վրայ
խելք յոգնեցնելու, ընդհանրապէս ուրիշ-
ներուն գործերուն վրայ շատ խելք յոգնե-

ցրնելով, ուրիշներուն ըրած շահերուն վրայ
նախանձելով և շատ կարեւորութիւն տալով
կը վնասուին:

16. Ամէն գործ արտաքին օջառերով կը
տեսնեն, մտքի օջառերը «դատողութիւնը»
օգնութեան չկանչելուն համար մեծապէս կը
տուժեն:

17. Բաղդի հաւատացող, բաղդին ճամ-
բուն նայելով սպասողներ շատ կան, սրով
մեծ պատեհութիւններ կը կորսնցնեն:

18. Ժամանակնին անգործութեամբ կ'ան-
ցընեն, խանվէները խազ խաղալով, կամ
խաղացողները դիտելով, ոչինչ, փտած խօ-
սակցութիւններ ընելով և կամ անոնց ուն-
կընդրելով:

19. Ռէժիսի հարստացնելու փափաքողներ
շատ կան. օրական մօտաւորապէս 20 ոսկիի
և տարեկան 6000 ոսկիի լուրջ գումար մը՝
ծխախոտ խմելու համար կը վատնուի յուժ-
պէտս, այս փոքրիկ քաղաքին մէջ, շրջա-
կայ գիւղերովը միասին, Երբեք միտքերնուն
անգամ չեն անցըներ թէ՛ այս վատնուած
գումարները եթէ յիսուն տարի միայն շա-
րունակաբար խնայուին, իրենց տոկոսներովը
միասին ութը միլիոն ոսկիի չափ աճագին և
ապշեցուցիչ գումարի մը կը հասնին. անա
գումար մը՝ որ կարող կրնայ ըլլալ քաղաք
մը ամէն կերպով բարգաւաճ, զարգացեալ
և յառաջադէմ վիճակի մը վերածելու:

20. Ալքովամուրներ թէեւ քիչ, սակայն
օրական գոնէ 1—2 գաւաթ խմողներ շատ
կան. ասոնց համար ալ հաւանաբար այս
փոքրիկ քաղաքին մէջ տարեկան 1000 ոս-
կիի չափ դրամ կը վատնուի: Դրամի կո-
րուսաբ, որ մեծ գումար մըն է, մէկ կողմ
թողլով, այդ ալքովը արդեօք ո՞րչափ հի-
ւանդութիւններու, տարածամ մահերու,
յետադիմութիւններու պատճառ կ'ըլլայ:

21. Չեն աշխատիր, հոնճար տաղանդ
չունինք ըսելով:

22. Չի յաջողելուն մէկ պտտճառն ալ
ընտիր նկարագիր չունենալնին է, և ուղ-
ղամտութիւնը՝ իսպառ հեռացած է իրենց
մտքէն:

23. Դրամը իրենց եսին համար շահիլ

կնուզեն, և բարեգործական, կրթական գործերուն համար (նոյն իսկ իրենց զաւակներուն համար) դրամ կը խնայեն :

24. Կանխիկ առնել և կանխիկ ծախելու գրութիւն չունենալնուն համար, չեն կրնար յառաջդիմել :

25. Ապառիկ առնել և ապառիկ ծախելնուն համար համար հետզհետէ կը կործանին նիւթապէս : Իմ՝ 25 տարիէ ի վեր քաղաքին մէջ գործող վաճառականներուն և էսնաֆներուն վրայ ըրած հետազոտութիւններս՝ զիս այս որոշումին յանգեցուցած են :

26. Ուրիշներէն օգնութիւն կ'սպասենք ծոյլ մնալով, չեն խորհիր թէ այս գրութիւնը աւելի վնաս կը պատճառէ՝ քան օգուտ :

27. Իրենց գործերուն մէջ կարգ կանոն չունին, ահա իրենց յետադիմելուն կամ չյառաջդիմելուն պատճառներէն մէկն ալ :

28. Օրինաւոր տետրակներ ունենալ կը պահանջէ վաճառականութեան օրէնքը, և հետեւաբար կարելոր գործողներու համար անհրաժեշտ է որ կրկնատոմարի գրութեամբ բռնեն իրենց հաշիւները ու տետրակները : Մեր քաղաքին մէջ 2-3 վաճառական միայն այս ձև տետրակ կը բռնեն. իսկ մնացեալները ամէնքն ալ պարզ, անկանոն կերպով, առանց խորհելու և մտածելու թէ օրինաւոր տետրակ չունեցող մէկը որչա՞փ անորոշ վիճակի մը մէջ կը գտնուի. եւ անդեալի մէջ անոնք որ կործանած կամ սնանկացած են, օրինաւոր տետրակ չունենալնուն համար որչա՞փ զղջացած են : Ետտեքու առեւտրական կործանման պատճառը օրինաւոր տետրակ չունենալն է :

29. Ճշգրտագիտութիւն չունենալնուն համար շատ կը տուժեն, վարկ եւ վստահութիւն ճշգրտագիտութեամբ եւ պարտաճանաչութեամբ կը շահուի, հետեւաբար ո՛չ թէ միայն մուրհակինն այլ եւ բերանացի խօսքերնին ալ օրը օրին, ժամը ժամին յարգել եւ կատարել պարտաւոր են : Ասանկ կը պահանջէ բարոյական օրէնքը եւ ո՛չ միայն բարոյական օրէնքը, այլ եւ բուն իսկ մեր անձնական շահն ալ :

30. Ծնողքներ երբեք չեն խորհիր պարտաւոր են :

ա. Իրենց զաւակներուն մտքին մէջ տարբերել տալ իրենց ապագայ գործին ընթացքը որոշել և անոր համեմատ պատրաստել : չտեսնող որ մեծ յառաջդիմութիւն չեն ունենար, կանուխէն առանց սկզբունքի և որոշման ձեռնադիրն է :


բ. Ծնողքներ երբեք չեն խորհիր թէ առջին եւ գործնական և ամենաօգտակար զարոցը՝ իրենց տունը, և իրենց զաւակներուն ուսուցիչները՝ իրենք են : Չտեսնող որ մեծ պարտաւոր են ո՛չ միայն որոշմանով այլ և իրենց օրինակներով հրահանգել իրենց զաւակները :

գ. Ծնողքներէն՝ հարուստ թէ աղքատ մէնքն ալ հաւասարապէս մե՞ծ թշնամութիւն, մե՞ծ զրկանք և մե՞ծ վնաս պատճառեն իրեն զաւակներուն, որովհետ օրինաւոր դաստիարակութիւն մը տալէ վեր հարուստներ իրենց զաւակները աշխատելուն ինքնազուլիս գործելու և զիրք մը գրաւելու չեն ստիպեր, ինչ որ կրնայ ըլլալ տառապանակալի տալու : Իսկ աղքատիկ ծնողներն ալ կ'սպասեն որ մինչեւ վերջը աղքատ աշխատի և ամբողջ շահերը իրենց տան համար ծախսէ և այլն : Ասիկա մեծ սխալ է : Չեմ ըսեր թէ զաւակները իրենց ծնողքին օգնելու չեն, այլ կը պնդեմ թէ անոնք իր յոյսերը բոլորովին կտրել տալէ իր ծնողքէն, իր ազգականներէն, և ինքնածին ուժերով ձգելու է որ աշխատի և ինքնին զիրք մը գրաւի 10 փարսանգ սկսեալ երբ տղան յաջողի, հետզհետ պիտի ճանչնայ իր պարտքերը հանգէպ ծնողքին, որոնք սկիզբէն մինչեւ զպարտութեամբ այնքան ծախսեր ըրած են իրեն համար և պիտի ջանայ փոխարինել դատարանէ որչափ կը ներեն իր միջոցները և յառաջդիմութեան փափաքները : Միացեալ հանգներու նախագահներէն Հիլմոյ Կարթըր (1831-1881) կ'ըսէ. «Փորձառաբար զիմ թէ աղքատութիւնը դառն վիճակ մըն է բայց երկուստարզի մը համար լաւագործ» :

որ չքաւորութեան ծովը նետուի . և ալիք-
ներուն դէմ ոգորելով կամ ազատէ ինքզինքը
և կամ խեղդուի : Կեանքիս մէջ չեմ յիշեր
մէկը որ ազատելու արժանիք ունէր ու խեղ-
դուեցաւ » :

Ահա ասոնք են այն գլխաւոր թերու-
թիւնները զորս կրցի ուսումնասիրել սա
կարճ միջոցիս մէջ , և որոնց հետեւանքով
առեւտրական յաջողութիւնը շատ կաղ կըն-
թանայ շատերու քով : Անոնց բարձուժով
կարելի պիտի ըլլար յաջողութեան պայման-
ներէն մեծագոյնները ապահովել , բոլոր ա-
նոնց , որոնք առեւտրական գործերու կը
ձեռնարկեն :

ՅՈՎՀԱՆՆԵՍ Ս. ՀԷՔԻՄԵԱՆ



ՈՒՍԱՆՈՂԻՆ ԿՏԱԿԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

Պալղիմօրի ծանօթ մէկ համալսարանին
մէջ իբր ուսանող նոր ընդունուած էր ինքը ,
բժկութեան հետեւելու համար :

Այդ արուեստը՝ տեսակ մը խորունկ ու
արտակարգօրէն հմայիչ ազդեցութիւններ
գործած էր իր վրայ , ու՝ գրեթէ ակամայ
մղում մը մը կը զգար որ առաջ անոր տի-
րանալով վերադառնալ ծնողներու քով՝
ու բարեկամներու ալ , որոնք ի՛նչ մեծ հա-
ճոյքով պիտի ընդունէին զինքը , ու յետոյ
կարող պիտի ըլլար արուեստաւորի վկայա-
կանը ու պաշտօնական համազգեստը ուսա-
նողութեան՝ ցուցնելու ամէնուն ալ , ու . . .
Տօ՛ղրը պիտի կոչէին զինքը :

Գաւառի հեռաւոր մէկ անկիւնէն ինքն
ալ եկած մեկտեղուած էր այն տարիներուն
դպրոցի գրասեղաններուն վրայ , հոգիով ու
միտքով ալ շատ մատղաշ տակաւին : Ու
գծուաբաւ պիտի կրնայինք վեր առնել որ
վերջէն երբ դպրոցը թողած հեռացած էինք
ամէնքնիս ալ , ինքը պիտի հեռանար ծովե-
րէն անդին տարբեր երկիրքի մը ներքեւ-
բուն աշխատանքներէ եւ յօգնութիւն-

ներէ վերջը՝ ինքզինքը նուիրելու տաժա-
նելի ու դժուարութիւնով ձեռք բերուելիք
արուեստի մը :

Բայց Տիրան՝ անդիմադրելի կերպով
հաստատ որոշողութիւններով սնած մէկը ,
ինքզինքին ու իր կարողութիւններուն բա-
ցարձակապէս վստահ , ու գիտակից , գոնէ
անպատուութիւն պիտի համարէր ա՛լ ան-
գամ մը իր անձովը՝ ու իր ձեռք բերելիք
գործին վրայ ուրիշները հետաքրքրելէ
վերջը թողել հեռանալ ձամբայէն , պզալով
սակայն որ նիւթալան շատ նեղութիւններ
պիտի ունենար քաշելու , եւ որոնց ստիպո-
ղարար պիտի տոկար ինքը : Դե՛հ ուրեմն ,
որոշումը առած էր սակայն :

Ու երբ ամփիթաւոր դասարանին մէջ
հարիւրէն աւելի ուսանողներու հետը ա-
ռաջին անգամը ըլլալով մօտիկ ըրաւ Տիրան՝
Բրօֆէսըրին դասախօսութիւնը , կտրուկ ու
որոշ բառերով անդամազննութեան նախա-
գիտելիքներուն վրայ , աչքերը մթազնիլ
սկսան , խորունկ հեւք մը առաւ զինքը , ու
այդ վայրկեանին իսկ զգաց որ անտանելի-
րէն դժուար պիտի ըլլար իրեն ատիկա ,
քանի որ շատ նեղ միջոցներով կ'ապրէր
ինքը , ու չպիտի ալ կրնար նոյն ատենը
գործել , դրամ չահելով հանգիստ սնունդ մը
ձեռք բերելու համար :

Իր մօտը , հո՛ն , Լեմբրիկայի մէջ ու շըր-
ջակաները , կային տղամարդիկ իրենհետ մօտիկ
յարարբերութիւններ ունեցող , ու յետոյ ու-
րիշներ՝ որոնք իսկապէս կը սիրէին զինքը .
սակայն անոնք այն ատենի առեւտրական
ահարկու տաղանապի մը պատճառով բոլորո-
վին պարապը կը սպասէին ու ոմանք ալ
մինչեւ վըյօմինկ ու Թէքասս՝ ներսի հեռա-
ւոր նահանգները թոած էին այլ և այլ
պատճառներով : Տիրան ասոնցմէ և ոչ մէ-
կէն կրնար օգնութիւն սպասել :

Ու թողոց որ գործերը իրենց ընթաց-
քովը առաջանան , քանի որ նախապէս ձեռք
բերած պզտիկ գումարը պիտի կրնար զին-
քը ապրեցնել , շարունակելու համար բժըշ-
կութեան ընթացքին առաջին տարին դոնէ :
Զարմանալի յուսախաբուութիւններ կ'ու-

նենար շատ անգամ, որոնցմէ վերջը միշտ աւելի պզտիկցած ու ընկճուած կը զգար ինքզինքը: Ամէն օր դպրոցէն վերջը նամակատուն կը վազէր իրեն յատուկ տուփին մէջ մօտիկ քաղաքներու բարեկամներէն գիր մը, դրամական նուէր մը փնտոելու համար: Գրեթէ ոչինչ կրցաւ ընդունիլ ամբողջ տարին:

Վերջէն քիչ մը բան հասաւ հէգ ուսանողին: Իր ծննդավայրէն, նախնի ծանօթ մը, լսած ու հետաքրքրուած էր իր վրայով: որը այդ ատեն Նոր Աշխարհի մէջ է՛ն յաջող հայերէն մէկն էր, ու յանկրճ շատ ուշ՝ անակնկալօրէն փայլատակող լոյսերու պէս եկաւ հասաւ իրեն 500 տոլար անկէ, որուն փոխարէն դժուարաւ կրցաւ բառեր գտնել իր սիրտէն զգացումներ պարտկելու համար:

Տեսակ մը վերկենցաղում էր ատիկա Տիրանին համար, ու օր մը յատկապէս Լինն եկած էր անձամբ, իր շնորհակալութիւնները յայտնելու անոր՝ որ յօժարամտութիւնը ունեցած էր զինքը յիշելու:

Կմախացած ու անարիւն իր յօրինուածքին վրայ վերկենդանութեան նշոյլներ սկսած էին ցոլալ, ու աչքերուն մէջը տեսակ մը վարվուունութիւն կը տիրէր այդ օրերուն՝ ա՛լ բժիշկ ըլլալու մօտիկցող ուսանողի յաւակնութիւններուն հետը մէկտեղ:

Տիրան անզգայ մէկը եղած չէր, ու ոչ ալ Ամերիկեան բարքերու հեշտին զգացումներուն անձնատուր, ընդհակառակը ա՛լ կամաց կամաց գաղափար կը կազմէր մարդկային կեանքի պէսպիսութիւններուն ու կազմակերպութեան վրայ: Հիմա հիանալի ու ապշեցնող կը զգար իր մէջը բովանդակ վեհութիւնը այդ արուեստին, ու իրական բարերարողի աչքը կը պտտցնէր ինքզինքին ու բոլոր այն միւսներուն վրայ՝ որոնք մարդկային ախտերու ամօքումին համար կ'աշխատին:

* * *

Իր յաճախած համալսարանը Ամերիկեան համալսարաններուն մէջ առաջիններէն մէկը

կը սեպուի: Չեմ կրնար ճշդել պրումուութիւնը այս կարեւոր հաստատութեան, միայն ինչ որ կը հետաքրքրէս զիս հիմակ, հայուսանողի մը կեանքին վերջին մանրամասնութիւններն են՝ զորս կ'ուզեմ վեր առնել:

Ուսանողութեան վերջին տարին եկած հասած էր ալ: Արուեստին առթած յոյսերը ալ կամաց կամաց սկսած էին արդիւնաւորիլ ու պտղաւորիլ Տիրանի համար Հեռուէն չպիտի խնդային իր ծնողքները, որովհետեւ մեռած գացած էին անոնք: Երկուսն անհուն բաղձանք մը ունէր ինքը վազել հասնելու իրեններուն մօտը:

Ոչ մէկը կանխած էր ատիկա, ու ոչ մէկը պիտի կրնար ըմբռնել գարշ ու սարսուռացողիչ հետեւանքը այն ամէնուն որոնցմէ հէգ երիտասարդը, Տիրան՝ վերջէն տառապեցաւ այնքան շատ:

Արուեստին յօգնութիւնները շատ բուռն եկած էին արդէն, ու ինքը կը զգար որ օր օրին կը պակսին իր ուժէն ու բովանդակութիւնէն շատ մը մասեր, սակա՞յն... սակայն կը հաւատար որ յոյսը պէտք չէր փախէր իրմէն թէ ինքը վերջապէս կարող պիտի ըլլար ոտքը դուրս նետել հոնկէ:

Թոքախտը որուն աւերքներուն մեղմէն ոչ մէկը իրաւունք պիտի տար, զգեանաւոր էր հէգ երիտասարդը, ու բովանդակ ուսանողութեան վերջին վեցամսեակը երբ պիտի մտնէր, նոյն իսկ իր այնքան շատ անգամ յաճախած դպրոցին հիւանդանոցին դուռները բացուած զգաց այս անգամ սակալատարբեր կերպով:

Վերջի ատենները նիւթական նեղութեան էն քիչ մը ազատելու համար զինքը՝ զբարոցը օգնած էր իրեն, ու ինք կը պարտեցնէր վճարելու զայն:

Վեց ամիս շանցած Տիրանի անկենդան մարմինը հիւանդանոցի դուռնէն կը տարուէր անդամահատութեան սրահը իր իսկ վերջնական վիճակին համաձայն, պատուաւորապէս մահէն վերջը վճարած ըլլալու համար դպրոցին իր պարտքը:

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ ԷՆ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆԻՆ

Օրը օրին հետեւող մը Ձեր Գրական Նամակներու շարքին, որոնք բրցուած են մեր ընկերական ու գրական կեանքէն, իրբեւզգացուած ու ընդհանրապէս անտեսուած իրողութիւններ; կը թելադրուիմ շեշտելու փորձը ընել Ձեր վերջին Գրական Նամակին յուզած կարեւոր հարցը, որ իր շատ մը մասերովը շահեկան ցուցադրումն է պարագաւ մը, որ ուշադրութեանը կը ներկայանայ լուրջ ընթերցողին, որովհետեւ օրուան գրական է՛ն բացորոշ մէկ պակասը կը շեշտուի հոն, իր մեկէ աւելի ցայտուն գրուագներովը: Գրական բազմալի կացութեան մը հասնելու անկեղծ մէկ փափաքնուը մօտ իրաւցնէ ոչմիտիթարական կացութիւն մը վըշտացնել տուած է ձեզ: Իրաւունք ունիք: Գրական իտէլա հայեցողութիւն մը երբ ունի մարդ, ուսմիկ ըմբռնումները, տարօրինակ ըլլալէ աւելի բան մը չեն արժեր:

Գրականապէս փայլուն կարծուած այսօրուան մեր լրագրութիւնը, երբ զրականօրէն գրականամէն պահանջումներու օժանդակ պիտի հանդիսանար ու իր կոչումին լիովին համապատասանող դիրք մը գրաւած, պատրանք մը կը զգանք, երբ հոն խտացած կը գըտնենք հանրութեան օգտակարութիւնէն բոլորովին դուրս անձնական հաշիւներու երկար ու տաղտկացուցիչ տողանցքը միայն:

Շատ բացորոշ պատկեր մը կը գծէք Ձեր Գրական Նամակին մէջ, գրականութեան ըմբռնումի մը մասին, զայն անարգանք մը նկատելով գրականութեան հասցէին:

Կը թողու՞ք որ ըսեմ թէ, արգարացումի մեծ իրաւունք մը կայ վրայահանուած այդ մասին:

«Ես իրաւունք չեմ տար ժողովուրդին երբ ան գէշ գաղափար կը կազմէ մեր գրողներուն վրայ, որովհետեւ եթէ մեր գրողները իրաւամբ արժանի են այդ տեսակ անարգանքի մը, սակայն իրենց այդ «կացութիւնը արդիւնքն է լոկ, որուն պատճառը նոյն ինքն ժողովուրդն է».— Կը

կարդամ զարմանալի զուգադիպութեամբ, Ծաղիկի մէջ: Քիչ մը անդին կարճ խորհրդածութենէ մը հտքը, ստորագրողն է որ կ'աւելցնէ:

«Ե՞րբ եղած է որ պատճառը իր արդիւնքին դէմ դժգոհանայ»... Կարծես թէ երկու տաղաչափօրէն իրար ընդգրկող գրութիւններ են ասոնք, որոնք թէեւ տարբեր երեւոյթներու տակ, այլ սակայն հետաքրքրաշարժ ու շահեկան կը ներկայանան ինծի, քանի որ նոյն նիւթը չօջափող մտածումներ կ'ըլլան անոնք, երկուքն ալ խոհուն ու ապրած գրիչներէ արտայայտուած: Խնդիրը ինչ որ ալ ըլլայ, սա միայն ցուալի է որ, մեր օրուան գրողները (համրուած բացառութիւնները միշտ յարգելով) լուրջ առաջադրութիւն մը դեռ նշանաբան չեն ունեցած իրենց, և անհարկի թափով մը, գրականութենէն դուրս, լրագրողի է՛ն կըտրուկ, նեղ, սահմանափակ իմաստին մէջ բերած խտացուցած են իրենց կոչումը, բնականաբար հասկցող հանրութեան առջեւ պատկերացնելով դպրոցականի տարեշրջանին հազիւ թեւակոխած մտքի մը արդիւնքները, ակնկալուած գեհապատումին բոլորովին անարժան:

Մտածենք թէ, նուա՞գ քաջալերուեցան կարող գրիչները, չը ծափահարե՞ց ժողովուրդը իր մէջ ծլող խոհուն գրիչները: Ի՞նչպէս կ'ուզուի որ գնահատումի արժանի սեպուի գրիչ մը, երբ կ'ելլէ գրել անանկ նիւթի մը վրայ, երբ որոշ գիտես թէ ինք չէ՛ ապրած այդ կեանքը: Ընթերցող ու հասկցող ժողովուրդը լա՛ւ գիտէ իր կարգին խրախուսել կարողները, ձեռնհասները, և մենք այդ իրողութիւնը երբ ուզենք վերլուծել վայրկեան մը, կարծեմ թէ արդարացուցիչ պիտի գտնենք ընթերցողներուն բռնած գիրքը, միշտ համոզուելով միեւնոյն ատեն թէ կարծուածին չափ անտարբերներ չեն անոնք:

Ժամանակը անցած չէ՛. սխալ ըմբռնում մը սրբագրելը քիչ պատուաբեր չէ: Յարատեւել և նուիրագործել գրականութեան կոչումը իրեն յատուկ ըմբռնումին մէջ,

ահա՛, ինչպէս գիտէք և ինչպէս դիտել տուած էք դուք ալ մէկ քանի առիթներով, աս է որ կը սպասուի մեր գրականութեան ի նպաստ :

Այն ատեն չէ՞ որ ինքնին պիտի հարթուին ընտանեկան ու ընկերային միջավայրի ներքին բարքերուն շատ մը վշտառիթ հանգամանքները :

Շատ ուշ պիտի չմնայ, այն ատեն, այն օրը, երբ խնդութեամբ պիտի ողջունենք այն հաճելի սալօնները, որոնք ուրիշներուն օրինակ ըլլալու սահմանուած են այս օրուան մէջ և որոնց ուրախալի գոյութիւնը կը հաստատէիք դուք Ձեր վերջին Գրական Նամակին մէջ :

ՌՕՄԱՆ Խ.

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ-ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐՅ ՄԸ

ՄԻՏԲԸ՝ ԲՈՒՆԻ ԱՏԵՆ

ԱՐԹՈ՞ՒՆ ԿԸ ՄՆԱՅ ԹԷ ԿԸ ՔՆԱՆԱՅ

Թէ միտքը կը քնանայ կամ ոչ, հարցում մըն է՝ որուն վրայ իմաստասէրներ չեն համաձայնած : Վերջերս Հէմիլդընի «Բնազանցութեան» մէջ, այս նիւթին վրայ ժամանակաւ Գաղղիոյ մէջ իմաստասիրութեան Սկովտիական դպրոցին պետ՝ Ճիւֆրէյի կողմէ գրուած հետեւեալ կտորին հանդիպեցայ, զոր իր մեծ օգտակարութեանը համար, թարգմանարար «Բիւրակն»ի ընթերցողներուն ներկայացնելու փափաքը կ'ունենամ :

* * *

Երբեք չեմ կրնար ըմբռնել թէ ի՞նչպէս միտքը անգործ վիճակ մը կրնայ ունենալ քունի մէջ. երբ կ'երազենք, մարմինը կը քնանայ ապահովարար. բայց միտքը՝ ո՛չ, որովհետեւ երազել մտքի արթնութիւն կ'ենթադրէ արդէն : Հետեւաբար, զանազան պարագաներու տակ, մինչ զգայարանք-

ները կը քնանան, միտքը արթուն կ'ենտ մնայ : Բնանալ՝ մտքին համար՝ չերազել կ'առաջ կը նշանակէ. եւ անկարելի է ապացուցական նել թէ վայրկեաններ կան քունի մէջ, ունի միտքը չերազեր : Կրնայ ըլլալ որ չյիշեն ինչ մեր երազները, բայց ատիկա չկրնար պահանջուի թէ չենք երազած, որովհետեւ իրապէս դիւրաւ կրնանք փաստել թէ, շատ մը պատճառներով երազանքով մէջ, իրաւամբ երազած ենք հարցութեան վրայ : Իրաւամբ երազած ենք հարցութեան վրայ :

Հաստատ գիտենք ուրեմն թէ, երբ զգայարանները կը քնանան, միտքը՝ երբեմն արթուն կը մնայ. բայց կա՞ն արդեօք պարագաներ ալ երբ վերջինը իրապէս կը հանգստանայ ի Մորփէոսի գրկին մէջ. չենք գիտեր հաւանաբար ուրեմն միշտ արթուն կը մնայ միտքը : Հերքելու համար այս ենթադրութիւնը, առօրեայ փորձառութենէ առնուած իրողութիւններ պէտք է մէջ բերել, իրողութիւններ, որոնք աւելի կը ձգտին հաստատել քան ջրել զայն : Պարագայ մը մէջ բերենք :

Երբ գաւառացի մը Բարիզ կուգայ, առաջին անգամ, իր պատուհանին տակէն անցնող կառքերու աղմուկէն կը վրդովնուի քունը. չուտով սակայն, կը վաբժուի ան ժխտրին, ու այլ եւս կը սկսի քնանալ ա՛յն ժամանակ, երբ քունը իր գիւլին մէջ : Աղմուկը նոյնն է. նոյնը նաեւ իր զգայարաններուն կրած աղբիւրէն, ինչո՞ւ ուրեմն նախ կը վրդովնուի օտարականին քունը միեւնոյն աղմուկէն ու յետոյ ո՛չ :

Արթնութեան մէջ նմանօրինակ փորձառութիւններ չեն պակսիր : Բարիզի աղմուկին անվարժ մէկը, առանց յաճախ իր խորհուրդներու գծէն չեղելու, չկրնար խուկալ փողոցներուն մէջ. մինչդեռ Բարիզացի մը բնաւ չազդուիր այդ ժխտրէն, ու ա՛յնչպիսի հանդարտութեամբ կը խորհի մարդոց ու կառքերու աղմուկին մէջ, որչափ պիտի կրնար խորհիլ անտառի մը ծառին տակ : Ինչո՞ւ այս տարբերութիւնը : Որով-

կհետե տպաւորութիւնները զոր օտարականը
 էլ կտալին անգամ կ'ընդունի իր աչքերուն և
 ցաւականջներուն շնորհիւ այն աստիճան նոր
 , ուր իրեն համար որ երբ մտքին կը հաս-
 ննջին անոնք, աւելի կը հետաքրքրեն զայն
 առան այն խորհուրդները, որոնցմով ինք նա-
 ետե խապէս կը փորձէր զբաղիլ: Այս նոր տպա-
 ւորութիւններու շարքը կրնայ գեղեցիկ,
 ենք զազուազէպ, հետաքրքրաշարժ և կամ ահ-
 թուանի պատճառի մը արդիւնքը եղած ըլլալ,
 մտքը ուրեմն չկրնար հանդարտ մնալ ա-
 զգաւանց հասկնալու այդ պատճառները: Իսկ
 բեմն Բարիցցին, որովհետեւ գիտէ այդ տպաւո-
 պութիւններուն սկիզբը, ընտանեցած է ա-
 անց նոնց հետ, չազդուիր անոնցմէ:

Թէ մտացրում և թէ ուշադրութիւն՝
 զգայարանքներէն անկախ են. զուտ մտա-
 ին խնդիրներ են անոնք. փողոցին աղմու-
 կին ոչ թէ զգայարանքները. այլ նոյն իսկ
 միտքն է որ կը վարժուի, նախ անոր համար
 միայն ուշադրութիւն կը դարձնենք անոնց,
 որովհետեւ մեքին վրայ թողուած տպաւո-
 րութիւնները նոր են. եթէ կը հիննան այդ
 տպաւորութիւնները, երբ միտքը կը վար-
 ժուի անոնց, այլ եւս չհետաքրքրուիր ա-
 նոնցմով:

Այսքան փոքր շեղումէ մը վերջ զար-
 ձնենք հիմա մեր ուշադրութիւնը միտքին,
 երբ մարմինը քունի մէջ է: Ի՞նչ կը պա-
 տահի երբ աղմուկ մը կ'արգիլէ մեզ քնա-
 նալէ: Յոգնած մարմինը կը սկսի մրափել,
 յետոյ տիրող աղմուկէն կ'ազդուին զգայա-
 րանքները ու կ'արթննանք դարձեալ, վե-
 րըստին կը քնանանք, նորէն կ'արթննանք
 և շարունակաբար: Ընդհակառակը եթէ
 վարժուած ենք անհանգստութիւն պատ-
 ճառող այդ աղմուկին, անոր մտքին վրայ
 ըրած տպաւորութիւնները չեն խոտովիր մեր
 անաջին քունը, ու կը շարունակենք քնա-
 նալ առանց ընդմիջուելու: Թէ զգայարանք
 ները աւելի թմրած են քունի մէջ քան
 արթնութեան ժամանակ, ոչ ոք կրնայ ու-
 րանալ: Բայց իրողութիւն մըն է միանգա-
 մայն թէ, քունի մէջ օտարականին զգա-

յարանքները ա'յնչպի թմրած են իր Բա-
 րիզ հասած առաջին, որչպի հարիւրերորդ
 գիշերը: Զգայարանքներու թմրութիւնը
 նոյնն է, նոյնը նաեւ փողոցին աղմուկը,
 հետեւաբար տարբեր չեն կրնար ըլլալ զգա-
 յարանքներուն միջոցաւ մտքին հազորդուած
 տպաւորութիւնները. ինչո՞ւ ուրեմն օտարա-
 կանը իր Բարիզ հասած առաջին գիշերը
 կ'արթննայ աղմուկէն, իսկ հարիւրերորդ
 գիշերը ո'չ: Նիդիքական պարագաներ նոյնն
 են, հետեւաբար այս տարբերութեան պատ-
 ճառը մտքին մէջ պէտք է փնտոնել: Են-
 թաղրենք թէ հոգին ալ մտքին հետ գացած
 է. ի՞նչպէս բացատրել ուրեմն այս վարկա-
 ծին համեմատ, վերոյիշեալ քունի պարա-
 գան: Կը մնայ արդ ընդունիլ թէ նախ միտ-
 քը չքնանար մարմինին հետ. երկրորդ թէ
 միտքը, որովհետեւ առաջին գիշերուան մէջ
 իրեն յաղորդուած տպաւորութիւնները նոր
 են, կ'արթնցնէ զգայարանքները, որպէս զի
 անոնք ստուգեն այդ տպաւորութիւններու
 պատճառները, եւ թէ երրորդ, յետոյ կը
 զաղրի այլեւս արթնցնելէ զանոնք եւ հե-
 տեւաբար կը քնանայ օտարականը, առանց
 արթննալու, վասն զի իրեն հազորդուած
 տպաւորութիւնները հին են ար-
 դէն, գիտէ զանոնք, ու կրնայ ըմբռնել
 անոնց պատճառները առանց զգայարանք-
 ներու օժանդակութեան:

Հոս յիշենք թէ միտքը, արտաքին ա-
 ռարկաներու վրայ ծանօթութիւն ստանա-
 լու համար՝ զգայարանքներու օժանդակու-
 թեան կը կարօտի: Քունի մէջ երբեմն
 զգայարանքները գոցուած են, ինչպէս աչ-
 քերը, մինչ ուրիշներ կէս մրափուն են,
 ինչպէս ականջները: Երբ միտքը խոտովի ի-
 րեն հասնող որ և է տպաւորութենէ, կը
 դիմէ զգայարանքներուն, որպէսզի ստու-
 գեն այդ տպաւորութեան պատճառը, ու
 փարատեն իր խոտովութիւնը: Այս պատճա-
 սու է դարձեալ որ քունի մէջ, մեր զգա-
 րանքները արթնցնելու ջանքը կը զգանք,
 երբ ոչ-ստովորական աղմուկ մը եւ կամ ա-
 նախօր՝ զգայութիւն մը կը վրդովէ մեր
 հանգիստը:

Քանի մը եզրակացութիւններ :

1. Քունի մէջ զգայարանքները միշտ կը մրափեն իսկ միտքը շարունակ արթուն կը մնայ :

2. Զգայարանքներէն ոմանք, քունի մէջ իսկ, կը շարունակեն հաղորդել մտքին իրենց անկատար զգացողութիւնները :

3. Միտքը կը քննէ իրեն հաղորդուած զգացողութիւնները, ու ի հարկին կ'արթնցնէ զգայարանքները :

4. Միտքը կ'արթնցնէ զգայարանքները, երբ անոնց միջոցաւ իրեն հաղորդուած զգացողութիւնները վրդովեն զինքը :

5. Միտքը զգայարանքները արթնցնելու զօրութիւնը ունի՝ բայց իր գործունէութեամբ անոնց մրափը նուաճելու մեթոտով է որ այդ զօրութիւնը, գործադրութեան կը դնէ :

Ն. Յ. ԱՆԻՐԷԱՍԵԱՆ

ՃԱՌՈՆԻ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Բորթ Արթուրի ամբուստներուն մօտէն անցնող երեք ուսական թորփիլանաւեր Ճաբոնցիներունը կարծուելով սխալմամբ ընկղմուած են :

* Բորթ Արթուրի ուսական նաւատորմին մէկ մասը նոյն նաւահանգիստէն մեկնեք է վերջերս, Բորթ Արթուրի դէմ Ճաբոնցիներուն յարձակման հետեւանքով Ալեքսիէվ ծովակալը հրամանըրեր է որ զինուորական չեղող ամէն մարդ մեկնի նոյն քաղաքէն :

* Համպուրկ-Ամերիկեան գիծին Պաքալիա շոգենաւը Վլատիվոսթոքէն 1000էն աւելի փախստականներ առած է, զորս ցամաք պիտի հանէ Մօզի կամ Չինկղաու :

* Ռուսերը 37,000 զօրք կը համախմբեն Ֆէնկ Քուանկ Չինկի մէջ, որ Նալու գետին Մանչուրիոյ կողմը ուսական գլխաւոր ամրոցը ըլլալու սահմանուած է :

Նալուի գետաբերինն առջեւ Ճաբոնցիներու ըրած նաւային ցոյցը կ'երեւայ թէ Ռուսերուն ուղադրութիւնը խափելու համար

եղած բան մըն է : Ճաբոնական յաժանաւերու պաշտպանութեան ներքեւ բազմութիւ զօրքերու շարժում մը տեղի կ'ունեննէ Լաութոնկի ծովախորշին մէջ : Ճաբոնցիներուն նպատակն է կարել Բորթ Արթուրեան ետեւէն անցնող երկաթուղին գիծը :

* Միջերկրականի ուսանաւատորմը հրամանի կը սպասէ իր ճամբան շարունակելու դէպի Մ. Արեւելք :

* Չինական կառավարութիւնը, ուսանաւորներու պատերազմին մէջ Չինու չէզոքութիւնը հռչակող հրովարտակներ ալ հրատարակեց, որոնց ամէնքն ալ կը հրամայեն անպատկառ կառավարիչներու՝ հսկել բարեկարգութեան պահպանման վրայ և պաշտպան միսիօնարները, օտար վաճառականները անոնց ստացուածքները : Չինական կառավարութիւնը այս հրովարտակները հաղորդեց զանազան օտար Տէրութեանց ղեկավարներուն, յայտնելով թէ չի կրնար ունէ պատասխանատուութիւն ստանձնել իր չէզոքութեան պահպանման համար այն չինական հողերուն մէջ որոնք ղեռ կը գտնուի օտար Տէրութեանց իշխանութեան տակ :

Ն Ո Ր Գ Ի Ր Ք Ե Ր

Ծանօթ ուսուցիչ և գրադէտ Ագրաւա էֆ. Տ. Յակոբեան, թարգմանելով սիրուն հատորի մը մէջ ամփոփած է Տօքթ. Ճօր Ուօչպըրնի քարոզները :

ԳՐԱՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒԻԵՓԱՐՈՉՆԵՐ Խորագրերին տակ :

Հատորին կցուած է նաև Ռօպէրթ Գօլթի համակրելի Տնօրէնին Տօքթ. Ուօչպըրնի լուսանկարը, որ միացած գիրքին շահեկան բովանդակութեանը, զայն ընթերցումի արժանի գողտրիկ հատոր մը կը դարձնէ Գինն է՝ լաթակազմ 8 շրջ : Թղթակազմ շրջ : Կը ծախուի Պայպլ Հաուս : Հասցէն սահմանուած է յատկացուելու, բարեսիրական նպատակի :

Տէր Է. ՏԳՈՐԿԻ

Հ. ՍՏԵՓԱՆ Խ. ԻԹԻԻՃԵԱՆ

Տպագ. ՆՇԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի ճաշքիս Իգսամ լրագրին դէմ քիւ...

ՀԻՒԱՆԴ ՄԻՆ ԸՎԱՔ

Հիւանդ մի՛ ըւաք. բայց եթէ ո՛ր եւ է
կերպով պէտք ունենաք բժշկի եւ դեղի,
միակ տեղ մը կայ ուր կարելի է դիմել՝
այն վստահութեամբ թէ զարմանի միջոց ու
օգտաւէտ դեղեր պիտի գտնէք:

ՇԻՒՔՐԱՆ ԴԵՂԱՐԱՆԸ

որ բացուած է Գատըքէոյ, Իսկէլէ Ճատ-
պէսի, ամէնէն սիրուած ու ամէնէն վստա-
հելի դեղարանն է. կենայ ըսուի:

Իր դեղերը թարմ են եւ անարաս

Իր չափն ու կեիտը ճիշդ են եւ անխաղախ

Իր գիները որոշ են ու չափաւոր

Նաև հոն յաճախող բժիշկները իրենց ար-
ուեստին մէջ հեղինակաւոր բժիշկներ են,
Ուրեմն

ԴԻՄԵՅՅԷՔ ՇԻՒՔՐԱՆ ԴԵՂԱՐԱՆԸ

Օր կայ ամէն տեսակ թարմ դեղերու ճոխ
մթերք մը զոր կը պատրաստեն աման, ճիշդ
դեղագրին համեմատ: Դեղարանին վարիչ-
ներուն ուղղամտութիւնը և քաղաքավարու-
թիւնը փորձուած՝ ապացուցուած է:

Առողջութիւնը հոն կենաք զնեւ աման
գինով:

Կ'ուզէ՞ք ունենալ ըմպելի մը ւժան եւ սննդաբար ,
 Կ'ուզէ՞ք խմել նեկտար մը հոսալիս եւ ստողջարար ,
 Կ'ուզէ՞ք ամառուան տօթագին օրերուն զովանալ ,
 Գնեցէ՞ք եւ խմեցէ՞ք խառնուրդ քիչերը զուարդարար :

الحملة التجارية
 ٢٠١٠

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԿՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԿՈՒԼԵԱՆ

Ընտր , ւժան եւ հոսալիս

Թ Է ՅԵՐ



Վանառասան

քիչ խառնուրդներ

Միշտ ւժան լու բարձ

Կի. Պոլիս, Պահճէ Կարու, Ղէլալ Պէյ Խան, Թիւ 10

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԸ

(ՇԵՏԵԻԼ ՅԻՍՈՒՍԻ)

Տըթ. Կ. Շէլտրնի «In His Steps» ա-
 նուն գիրքը՝ որ Ամերիկայի եւ Անգլիոյ մէջ
 գրեթէ աննման յաջողութիւն մը ունեցած
 է, Հայերէնի թարգմանած է Քրօֆ. Վ. Յ.
 Յակոբեան՝ Քրիստոնէութեան Կաղափարա-
 կանը խորագիրին տակ :

Քրիստոնէութեան նկարագիրը եւ հոգե-
 ւոր կեանքի ազնիւ օրինակը սիրուն պատ-
 մութեան մը մէջ պարզած է տաղանդաւոր
 հեղինակը այդ գիրքին մէջ եւ յաջողած է
 զայն ամէն կարգի ընթերցողներու հաճելի
 եւ հետաքրքրաշարժ ընել :

Ընտիր թուղթի վրայ մաքուր տպագրու-
 թեամբ եւ լաթակազմ, 5 դահեկանի կը
 ծախուի Կ. Պոլսոյ եւ գաւառներու բոլոր
 գրավաճառներուն քով :

Կեդրոնատեղին է՝

Յ. ՄԱՏԹԷՆՈՍԵԱՆ վանառասունը ,

Պայպըլ Հատու, Կ. Պոլիս